

Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
օգոստոսի 13-ի նիստի N 38
արձանագրային որոշման

**ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՈԼՈՐՏԻ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Բովանդակություն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ և ՀՈՄԱՆԻՇՆԵՐ.....	2
1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	6
2 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ. ՆԵՐԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ, ՌԻՍԿԵՐԸ, ԵՆԹԱԴՐՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....	6
2.1 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ	7
2.2 ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՐՑԵՐ	10
2.2.1 Կառավարման տարբերակ <<սպասարկվող>> տարածքների համար.....	10
2.2.2 Կառավարման տարբերակներ <<չսպասարկվող>> տարածքների համար.....	11
2.3 ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՓՈԽԼԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	12
2.3.1 Առաջնահերթությունների սահմանման անհրաժեշտությունը.....	12
2.3.2 Առաջնահերթությունների սահմանման մասով մոտեցումը.....	12
2.3.2.1 Առաջնահերթությունների սահմանման քայլերը	12
2.4 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ.....	13
2.4.1 Տարբերակ Ա. Բազային տարբերակ.....	13
2.4.2 Ռազմավարության Տարբերակ Բ	13
2.4.3 Ռազմավարության Տարբերակ Գ.....	16
2.4.4 Վերլուծություն լավագույն տարբերակի ընտրության համար	19
2.5 ՆԱԽԸՆՏՐԱԾ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ.	20
2.6 ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	21
3. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ և ԶՐԱՀԵՌԱՅՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ.....	22
4.ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ	25
4.1 ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	25
4.2 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՄՇԱԿԻՏԱՐԿՈՒՄ.....	26

Հապավումներ և հոմանիշներ

ՅՏՋԿ	<<Լոռի-ջրմուղկոյուղի>>, <<Շիրակ-ջրմուղկոյուղի>> և <<Նոր Ակունք>> փակ բաժնետիրական ընկերություններ
ՀՀԴ	Հայկական դրամ
ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ADF	Ասիական զարգացման հիմնադրամ (= ԱԶԲ արտոնյալ վարկերի մասնաճյուղ)
ԱԶՌ	Հայաստանի զարգացման ռազմավարություն
ՀՋԱՀ	Հայաստանի ջրահեռացման ազգային հիմնադրամ
ԱԳԽ	Ակտիվների գրանցման խորհրդատու
ՀՄՆՀ	Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ
ԱՍՏ	Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ (խորհրդատվական կազմակերպություն)
Հայպետհիդրոմետ	ՀՀ ՏԿԱԻ նախարարության հիդրոթերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն
ՀԿՀԱԱՀՄ	Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի ՀԿ
ՀՋԿ	<<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ
ԱՋԱԱ	Ամերիկայի ջրային աշխատանքների ասոցիացիա

ԵԶՖՀ	Երկկողմանի զարգացման ֆինանսավորման հաստատություն
ՋԿՊ	Ջրավազանային կառավարման պլան
ԿԾ	Կապիտալ ծախսումներ
CES	Consulting Engineers Salzgitter GmbH (գերմանական խորհրդատվական ընկերություն)
ՀՖՄ	Համայնքների ֆինանսիստների միավորում
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ԿԸԻ	Կոռուպցիայի ընկալման ինդեքս
ԿՋՋ	Կենտրոնացված ջրամատակարարում և ջրահեռացում
ԿԿ	Կեղտաջրերի մաքրման փոքրաչափ կայան
ՄԶԴ	Միջազգային զարգացման դեպարտամենտ (ՄԹ)
DHI	DHIInfrastructure Economics & Finance (ԱՄՆ խորհրդատվական ընկերություն, որը մշակել է Ջրի սակագնի կանխատեսման մոդելը)
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ԵՀ	Եվրոպական հանձնաժողով
ԵԿԱ	Եվրոպա և Կենտրոնական Ասիա
ԱԵԿԿԱ	Արևելյան Եվրոպա, Կովկաս եւ Կենտրոնական Ասիա
ԵՆԲ	Եվրոպական ներդրումային բանկ
ՊՎԸԱ	Պահպանման և վերանորոգման ընդլայնված աշխատանքներ
ԵՄ	Եվրոպական Միություն
ԵՄՋՆ	ԵՄ Ջրային նախաձեռնություն
ԸՆԾ	Ընտանեկան նպաստի ծրագիր
ԻՈՒ	Իրագործելիության ուսումնասիրություն
ՎՆԲ	Վերջնական նմուշառման բաժին
ՆԽՄ	Նախկին Խորհրդային Միություն
ԱՏԱ	Ամբողջական տեխնիկական առաջարկ (ԱԶԲ ոճ)
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՀ կառավարություն	Հայաստանի Հանրապետության կառավարություն
ԲՏԱ	Բնակարանատերերի ասոցիացիա (<<համատիրություն>>)
ՀՏԿ 1	Հիդրոտեխնիկական կառույց
ՎԶՄԲ	Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկ (սովորաբար կոչվում է <<Համաշխարհային բանկ>>, սակայն փաստացիորեն այն ՀԲԽ հիմնական բաղադրիչն է)
ԶՄԱ	Զարգացման միջազգային ասոցիացիա (=ՀԲԽ արտոնյալ վարկերի մասնաճյուղ)
ՄՖԿ	Միջազգային ֆինանսական կորպորացիա (ՀԲԽ-ի բաղադրիչ, որը վարկավորում է մասնավոր սեկտորին)
ՄՖՀ	Միջազգային ֆինանսական հաստատություն
ԿԱՀ	Կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն
ՄՀՀ	Միջհամայնքային համագործակցություն
ՄՀ	Մեկնարկային հաշվետվություն
ԵԿԱԾ	Ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագիր
ՋՈՒԿ	Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում
ՄՀՃԲ	Միջազգային համագործակցության Ճապոնիայի բանկ
ՀՄԾ	Համատեղ մշտադիտարկման ծրագիր
KfW	Վերականգնման վարկերի բանկ (Գերմանիա) (ստույգորեն՝ KfW Entwicklungsbank = KfW Development Bank)
ԿՀՑ	Կատարողական հիմնական ցուցանիշ
ՎՊ	Վարձակալության պայմանագիր
ԲԲԾԿՄՕ	<<Բազմաբնակարան շենքի կառավարման մասին>> ՀՀ օրենք
ՀՄՕ	<<Համատիրության մասին>> ՀՀ օրենք
ՋՄ	Ջանքերի մակարդակ (=տրված առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ օրերի թիվը)
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ԲՇԿՄ	Բազմաբնակարան շենքի կառավարման մարմիններ
ԿՊ	Կառավարման պայմանագիր
ՀՀ Ֆինանս	ՀՀ ֆինանսների նախարարություն

ՀՀ ԷԲՊՆ	ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
ՀՀ ԳՆ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ՀՀ ԱՆ	ՀՀ առողջապահության նախարարություն
ՀՀ ԲՆ	ՀՀ բնապահպանության նախարարություն
ՀՀ ՏԿԱԻՆ	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն
ՀՀ ՔՆ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն
ՄԺԾ	Միջնաժամկետ ծախսային ծրագիր
ՋԱԾ	Ջրի ազգային ծրագիր
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԱՔԵ	Ազգային քաղաքականության երկխոսություն
ՋԱԽ	Ջրի ազգային խորհուրդ
ԱՎԾ	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
ՋԱԾ	Ջրի ազգային ծրագիր
ՏՀՀԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՇԱՊ	Շահագործում և պահպանում
ՇԾ	Գործառնական ծախսեր (սովորաբար ներառում է նաև սպասարկման ծախսերը)
ԳՀՀ	Գործընկերության և Համագործակցության Համաձայնագիր (ՀՀ կառավարության և ԵՄ միջև)
ԱԸՆԾ	Աղքատության ընտանեկան նպաստների ծրագիր
ՊՄԳ	Պետական-մասնավոր գործընկերություն
ՄՀՄ	Մասնավոր հատվածի մասնակցություն
ԱՆԲ	Առաջնային նմուշառման բաժին
ՀԾԿՀ	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
ԱՀՖ	Արդյունքների վրա հիմնված ֆինանսավորում
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՋՏՊԿ	ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե
ԲՊՏ	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչություն
ՀԵՄԿ	Հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոն
ԱՊՏ	ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչություն
ՊՈԱԿ	Պետական ոչ-առևտրային կազմակերպություն
ՊՏԱ	Պարզեցված տեխնիկական առաջարկ (ԱԶԲ արտ parlance)
ՋՊԿ	ՀՀ բնապահպանության նախարարության ջրային պետական կադաստր
ՋՊԿՏՀ	Ջրային պետական կադաստրի տեղեկատվական համակարգ
SWOT	Ուժեղ ու թույլ կողմեր, հնարավորություններ, սպառնալիքներ
SO 8249	ԵԿԱԾ-ի քաղաքականության և խորհրդատվության մասով տեխնիկական օժանդակություն (ՔԽՏՕ)
SO 8710	ԵԿԱԾ-ի տեխնիկական օժանդակություն, փուլ 2
ԿԸՊ	Կառավարման ընդհանուր պլան (մշակված 2013թ.-ին Saur կողմից <<Հայքրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի համար)
ՍԿՄ	Սակագնի կանխատեսման մոդել (մշակված 2014թ.-ին DHIInfrastructure կողմից ՀՄ համար)
ՍԿՃՄ	Սակագնի կանխատեսման ճշգրտված մոդել (DHI-ի ՏԿՄ տարբերակ, DHI-ի կողմից ՏԿՄ-ով սահմանված սխալների ուղղում, որը հասանելի է դարձել 2015թ. ապրիլի 1-ին)
ՍԿՓՄ	Սակագնի կանխատեսման փոփոխված մոդել (ԱԶԲ SO 8710 թիմի կողմից ՍԿՓՄ փոփոխված տարբերակ)
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ՄԱԿ ԵՏՀ	Միավորված ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողով
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ (Հայաստանում այն 20%)
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԲԽ	Համաշխարհային բանկի խումբ
ՋԿԴ	Ջրավազանային կառավարման ղեկավարություն
ՋԿՄ	Ջրավազանային կառավարման մարմին (= ՋԿԴ այլընտրանքային անվանում)

ՋԿՊ	Ջրավազանային կառավարման պլան
ՋՇԴ	ԵՄ Ջրի շրջանակային դիրեկտիվ
ՋՌԿԳ	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն
ՋԶԸ	Ջրամատակարարման և ջրահեռացման ընկերություն
ՋՄ և ՋՀ	Ջրամատակարարում և ջրահեռացում
ՋՈԵԽ	ՏՕ 8710 խորհրդատվական թիմի ջրային ոլորտի ենթախումբ
ՋՈՌՓ	Ջրային ոլորտի ռազմավարության փաստաթուղթ
ՋՀՕԹ	Ջրային համակարգի օգտագործման թույլտվություն
ՋՄԿ	Ջրերի մաքրման կայան
ՎՊ	Վճարելու պատրաստականություն (ՎՊ-ի հետագոտության ձևով)
ՋՕՄ	Ջրօգտագործողների միություններ
ՋԹ	Ջրօգտագործման թույլտվություն
ԿՄԿ	Կեղտաջրերի մաքրման կայան
ՈԵՋ	Ոչ եկամտաբեր ջուր
ԾՕՎ	Ծախսեր-օգուտներ վերլուծություն
ԱԽԽ	Անցումային խորհրդատուի խումբ
Օպերատոր	<<Հայջրմուկոյություն>>, <<Լոռի-ջրմուկոյություն>>, <<Շիրակ-ջրմուկոյություն>> և <<Նոր Ակունք>> փակ բաժնետիրական ընկերությունների մասնավոր կառավարիչ <<Երևան Ջուր>>, <<Հայջրմուկոյություն>>, <<Լոռի-ջրմուկոյություն>>, <<Շիրակ-ջրմուկոյություն>> և <<Նոր Ակունք>> փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի ապագա վարձակալ՝ նախատեսված ՀՀ կառավարության 14.08.2014թ. N 883-Ն և N 888-Ն որոշումներով

Արտարժույթի փոխարժեքներ (Ապրիլ 2015թ.)

1 Եվրո = 510 ՀՀԴ

1 ԱՄՆ դոլար = 475 ՀՀԴ

Սահմանումներ

Տերմին	Սահմանում
<<սպասարկվող>>	Այս տերմինը օգտագործվում է Հայաստանում ՋՄ և ՋՀ հինգ ջրամատակարար ընկերություններից մեկի կողմից սպասարկվող աշխարհագրական տարածքները և համայնքները սահմանելու համար:
<<չսպասարկվող>>	Այս տերմինը օգտագործվում է Հայաստանում ՋՄ և ՋՀ հինգ ջրամատակարար ընկերությունների կողմից չսպասարկվող աշխարհագրական տարածքները և 579 համայնքները սահմանելու համար: Այս <<չսպասարկվող>> համայնքները ներկայումս ունեն ջրային համակարգի կառավարման կազմակերպական այլ պայմանավորվածություններ:
<<քառորդ>>	Այս տերմինը օգտագործվում է Հայաստանի չորս ջրային ենթաօլորտները սահմանելու համար: Չորս <<քառորդներն>> են՝ Ք1 = <<սպասարկվող>> տարածքների ՋՄ Ք2 = <<սպասարկվող>> տարածքների ՋՀ Ք3 = <<չսպասարկվող>> տարածքների ՋՄ Ք4 = <<չսպասարկվող>> տարածքների ՋՀ
Լրիվ ծախս	Ջրամատակարարման ոլորտում <<լրիվ ծախս>>-ը վերաբերվում է ՋԶԾ մատուցման ամբողջ կամ ընդհանուր ծախսին: Այն հիմնականում կազմված է ՇԼՊ ծախսեր + տարեկան կապիտալ ծախսեր + Տարատեսակ այլ ծախսեր:
Լրիվ ծախսաձածկում	Այս տերմինը վերաբերվում է այն վիճակին, երբ ջրամատակարարման ընկերությունը ձածկում է մատուցվող ծառայությունների ամբողջ ծախսերը: Սովորաբար դա իրականացվում է սակագների այնպիսի մակարդակի սահմանումով, որը ապահովում է ծախսաձածկումը (կարգավորողի հաստատումը ստանալու պայմաններում):

1 Ներածություն.

1. Սկսած 2001 թվականից ՀՀ կառավարությունը իրականացնում է ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի բարեփոխումներ: Ընդունվել է ՀՀ ջրային օրենսգիրք (2002թ.): Այնուհետև ՀՀ կառավարությունը ջրամատակարարման մասնավոր օպերատորների հետ կնքեց կառավարման, իսկ <<Երևան Զուր>> ՓԲԸ-ի հետ վարձակալության պայմանագրեր և իրականացրեց խոշոր ներդրումներ ջրամատակարարման ենթակառուցվածքների բարելավման համար: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում են հինգ ջրամատակարար կազմակերպություններ՝ <<Երևան Զուր>> ՓԲԸ՝ վարձակալության պայմանագիր Veolia ընկերության հետ, <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ՝ կառավարման պայմանագիր SAUR ընկերության հետ, տարածաշրջանային ջրամատակարար ընկերություններ՝ <<Նոր Ակունք>>, <<Լոռի-ջրմուղկոյուղի>> և <<Շիրակ-ջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ներ՝ կառավարման պայմանագիր ԷմփՎի Դեկոն, ԷմփՎի Էներջի, ԷյիՋի սերվիզ ընկերություններից կազմված կոնսորցիումի հետ, SAUR ընկերության գլխավորությամբ (սկսած 2014թ. հունվարի 1-ից):


Բոլոր այս ՊՄԳ պայմանագրերը ավարտվում են 2016թ. մայիսին և պետք է նոր մրցույթ անցկացվի: Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում իրականացվում են 2-րդ սերնդի բարեփոխումները: ՀՀ կառավարության և միջազգային ֆինանսական կազմակերպությունների համագործակցության արդյունքում իրականացվել են ոլորտի հետագա զարգացմանն ուղղված համապատասխան ուսումնասիրություններ: Ասիական զարգացման բանկի աջակցությամբ մշակված ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ռազմավարությունը և ֆինանսավորման ծրագիրը ամփոփում և ամբողջացնում են ոլորտի վերաբերյալ ուսումնասիրությունները, կատարված վերլուծություններից ելնելով ներկայացվում են առաջարկություններ և նախանշվում են հետագա անելիքները:

Ռազմավարության և ֆինանսավորման ծրագրի մշակման պատասխանատու պետական մարմինը՝ ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն է (ՋՏՊԿ):

2 Ռազմավարության հիմնական նպատակը. Ներկա խնդիրները և առաջարկվող լուծումները, ռիսկերը, ենթադրվող արդյունքները

2. Ջրային տնտեսության ոլորտում անցած տարիների ընթացքում բազմաթիվ խնդիրներ են լուծվել, այնուհանդերձ, հետևյալ խնդիրները պետք է դիտարկվեն առաջիկա տարիների ընթացքում՝
- Ներկայիս սակագները ցածր են, և բերում են 5 ջրամատակարար ընկերություններից 4-ի ոչ համարժեք ֆինանսական կենսունակության և բավարար չեն ոլորտի հետագա ներդրումային կարիքները հոգալու համար:
 - Գծագիր S1-ը ցույց է տալիս, որ ջրային ոլորտի համար ՀՀ կառավարության անհրաժեշտ ֆինանսական աջակցությունը արդյունքում ավելի բարձր է, աճող և շարունակական՝ օպերատորների պակասորդը և պարտքի սպասարկման աճող ծախսերը ծածկելու համար:
 - Ներկայումս, 579 <<չսպասարկվող>> համայնքներն ունեն սպասարկման ցածր որակ և մեծ ներդրումային կարիքներ, որոնք չեն սպասարկվում մասնավոր օպերատորների կողմից:
 - Նախկինում ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ոլորտները չեն դիտարկվել որպես առաջնահերթության խնդիրներ:

Գծագիր S1. ՀՀ կառավարության աջակցությունը ջրային ոլորտին (մլն ՀՀԴ)



3. Հայաստանի Հանրապետության ջրամատակարարման ծառայությունների հետագա բարելավմամբ պայմանավորված օգուտների մասով առկա է մեծ ներույթ: Այնուհանդերձ, նման օգուտներ ձեռք բերելու համար ՀՀ կառավարությունը հանդիպում է զգալի տեխնիկական, տնտեսական և ֆինանսական դժվարությունների:
4. Ջրային ոլորտի նախկին բարեփոխումները հիմնականում կենտրոնացած էին <<սպասարկվող>> տարածքների ջրամատակարարման բարելավման վրա: Բարեփոխումների մյուս փուլը (2-րդ սերնդի բարեփոխումներ) պետք է ավելի շատ կենտրոնացած լինի ջրահեռացման ոլորտի վրա, ինչպես նաև <<չսպասարկվող>> տարածքների բարելավումների վրա, որոնք երկուսն էլ, ըստ էության, ավելի բարդ են:


2.1 Ֆինանսական կարիքներ

5. ՀՀ կառավարությունը վերանայել է Հայաստանի Հանրապետությունում ջրային ոլորտի ծառայությունների բարելավման ներդրումային կարիքները և գնահատել է ֆինանսավորման հավանական աղբյուրները՝ Հայաստանի Հանրապետության ջրային ոլորտի ծառայությունների համար 2016-2030թթ. իրատեսական ներդրումային պլան ստանալու նպատակով:
6. Այս գնահատումը ցույց է տալիս, որ.
 - 1) Կարիքները և անջրպետը համամասնորեն ավելի բարձր են <<չսպասարկվող>> համայնքների դեպքում, որոնք կարող են չֆինանսավորվել և ավելի քիչ ուշադրության արժանանալու ռիսկ ունենալ, եթե ջրամատակարարման ներդրումային ծախսերը շարունակեն գերակշռել:
 - 2) Ջրամատակարարման համար անհրաժեշտ ծախսերի մեծ մասը գոյություն ունեցող գույքի վերակառուցման համար է, որը քայքայվել է անբավարար պահպանման և սպասարկման պատճառով: Վերջինս, իր հերթին, մասամբ պայմանավորված է այդ նպատակով օպերատորներին հասանելի ֆինանսական միջոցների սղությամբ, քանի որ հաստատված սակագները չեն ապահովել նույնիսկ ՇՆՊ ծախսածածկումը:
 - 3) Ներդրումային կարիքների մասով վերջին ուսումնասիրությունների գնահատականները զգալիորեն գերազանցում են ջրային ոլորտի համար ՀՀ կառավարության կողմից համախմբվող հնարավոր ֆինանսական միջոցները:
7. Հետևաբար, ռազմավարության շրջանակներում ՀՀ կառավարության առաջնահերթ գործողությունները հետևյալն են.

- 1) Ապահովել գույքի հուսալի կառավարում, արդյունավետ շահագործում և պահպանում
- 2) Ճշգրտել սակագներն այնպես, որ դրանք բավարար չափի եկամուտ ձևավորեն՝ վերը նշվածի ծախսերը հոգալու համար՝ նկատի ունենալով նաև բնակչության համար մատչելիության շեմը:
- 3) Ապահովել ծառայությունների արդյունավետ մատուցումը և ստեղծել հանրային վստահություն առ այն, որ օպերատորները կարող են մատուցել այդպիսի ծառայություններ, որպեսզի բարձրացված սակագներն ընդունելի լինեն:
- 4) Մշակել և իրականացնել հուսալի, մատչելի ռազմավարություն՝ <<չսպասարկվող>> համայնքներում կայուն ՋՄ և ՋՀ ունենալու նպատակով:
- 5) Մշակել հավասարակշռված, իրատեսական ծրագիր՝ <<սպասարկվող>> և <<չսպասարկվող>> տարածքների ջրամատակարարման և ջրահեռացման վերաբերյալ:

8. **Գծագիր S2** ցույց է տալիս, որ Հայաստանի բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների լրիվ ծախսածածկման ապահովման մասով եկամտային պահանջները 2014թ. մինչև 2030թ. պետք է զգալիորեն աճեն, այսինքն՝ 140%-ով բարձրանան (կայուն գների պայմաններում): Դա պայմանավորված է նրանով, որ պարտքի սպասարկման ծախսերը այդ շրջանում կաճեն ավելի քան 10 անգամ, և քանի որ գոյություն ունեցող գլխավորապես արտոնյալ վարկերի արտոնյալ ժամկետները սպառվում են (հիմնականում 2015 թվականին), այդպիսով պարտքի հիմնական գումարի վերադարձը սկսվում է: 2030 թվականին պարտքի սպասարկման ծախսերը կկազմեն մատուցվող ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ընդհանուր ծախսերի 48%-ը: Սա կստեղծի ջրամատակարարման ծառայությունների մատչելիության լուրջ խնդիրներ և ճնշում կգործադրի ջրամատակարարման ծառայությունների հանրային ֆինանսավորման աջակցության մասով: Գծագիր S2 հիմնված է ջրային ոլորտի համար առաջարկված իրատեսական ներդրումային ծրագրի վրա, որը կազմում է 20 միլիարդ ՀՀԴ/տարեկան, 2016թ.-2030թ. ժամանակաշրջանի համար (ըստ ջրային ոլորտի ռազմավարության Բ տարբերակի): Ավելի խոշոր ներդրումային ծրագիրը կարող է բերել պարտքի սպասարկման նույնիսկ ավելի բարձր մակարդակի և անհրաժեշտություն կլինի կիրառել ավելի բարձր սակագներ:

Գծագիր S2. Միասնական վարձակալ. Լրիվ ծախսերի ամփոփ ներկայացում (= եկամտային պահանջներ)



9. Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ռազմավարության մշակման համար հիմք են հանդիսացել հետևյալ ուսումնասիրությունները.

Աղյուսակ 2.1

Հղում	Անվանում
<<Դորշ Ինտերնեյշնալ Քոնսալթանթս>>, <<Հիդրոֆիլ ԱյՍի>>, <<Վի Ջի Էմ Փարթներս>> և <<Հիդրոէներգետիկա>> ընկերությունների կոնսորցիումի հետ համատեղ ուսումնասիրություն	
Դորշ (2014 թ.)	Հայաստանի ջրային ոլորտի ուսումնասիրություն. Ջրային ոլորտի ներկա վիճակի վերաբերյալ ավարտական հաշվետվություն:
Դորշ (2014թ.)	Հայաստանի ջրային ոլորտի ուսումնասիրություն. Ֆինանսական և մարդկային ռեսուրսների ազդեցության վերաբերյալ ավարտական հաշվետվություն:
Դորշ (2014թ.)	Հայաստանի ջրային ոլորտի ուսումնասիրություն: Ոլորտի վերանայում և ռազմավարություն:
ՍԵՍ-ի ուսումնասիրություն՝ <<Ջրուղ>> ՍՊԸ հետ համագործակցաբար	
ՍԵՍ (2014թ.)	Հայաստանի գյուղական համայնքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման և զարգացման իրագործելիության ուսումնասիրություն, Հիմնական հաշվետվություն , 2014թ. հոկտեմբեր, և հավելվածներ (մարտ 2015թ.):
Տրեմոլետ Քընսալթինգի և <<Ջինջ>> ՍՊԸ-ի հետ համատեղ ուսումնասիրություն	
ՏՀԶԿ (2014թ.)	Հայաստանում կայուն ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ազգային ռազմավարության մշակում: Փուլ 2 հաշվետվություն՝ Հայաստանում սանիտարական պայմանների ապահովման սկզբունքներ:
ՏՀԶԿ (2014թ.)	Հայաստանում կայուն ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ազգային ռազմավարության մշակում: Համապարփակ հաշվետվություն՝ վերջնական հաշվետվություն:
ԱԶԲ Ֆինանսավորմամբ իրականացված ուսումնասիրություններ	
ԱԶԲ (2013թ.)	Քաղաքականության և խորհրդատվական տեխնիկական աջակցություն: Հայաստանի ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագիր-Ջրային ոլորտ: Ավարտական հաշվետվություն:
ԱԶԲ (2014թ.)	Չհաշվառված ջրի կրճատման գործողությունների պլան:
ՀԲ	Հայաստանի ջրային տնտեսության սակագների ուսումնասիրություն:

10. Վերոնշյալ ուսումնասիրությունները և Հայաստանի Հանրապետության զարգացման ռազմավարությունը հիմնված են աճի մասով լավ կանխատեսումների վրա, որոնք իրենց հերթին համաձայնեցված էին 2014թ. իրականացված այլ գնահատականների հետ: Այնուհանդերձ, դրանից հետո Հայաստանի Հանրապետության տնտեսական հեռանկարը հաջորդ տարիների համար հստակեցման կարիք ունի: Շուկայական ներկայիս պայմաններում մասնավոր կառավարչի համար դժվար կլինի փոխ առնել ֆինանսական միջոցներ հիմնական կապիտալ ներդրումները ապահովելու համար, քանի որ փոխառության ծախսերը ավելի մեծ են և պահանջվող վարկերը ձեռք բերելու համար օպերատորները պետք է ցուցադրեն լավ պատմություն՝ բարձր սակագների պայմաններում շահութաբերություն ունենալու մասով: Այսպիսով, ջրային ոլորտի ներդրումային կարիքները ապահովելու համար, ՀՀ կառավարությունը կարիք կունենա դոնորների ֆինանսավորման: Մինչև օրս, ՀՀ կառավարությունը ջրային ոլորտի ներդրումների համար հնարավորություն ուներ դոնորներից ստանալ փոփոխական տոկոսներով վարկեր բացառապես ցածր դրույքաչափերով, քանի որ 2008 թվականից միջազգային բազիսային դրույքաչափերը (Libor and Euribor) բացառապես ցածր էին: Հետագա 15 տարիների համար հնարավոր են ռիսկեր,

քանի որ պարտքի սպասարկման ծախսերը կարող են նույնիսկ ավել աճել, եթե Libor և Euribor աճեն սովորական մակարդակով:

11. Հետևաբար, ՀՀ կառավարության ռազմավարությունը գլխավորապես հիմնված է ջրային ոլորտի իրատեսական ներդրումային ծրագրի վրա, որի մասով մշակվել է բարեփոխումների երկու տարբերակ (Բ և Գ), որոնցից յուրաքանչյուրը համեմատվել է անցյալում և ներկայումս շարունակվող փորձի՝ բազիսային (Ա) տարբերակի հետ: Արդյունքում պահանջվեցին բարեփոխումների նոր տարբերակներ:

2.2 Ինստիտուցիոնալ հարցեր

2.2.1 Կառավարման տարբերակ «սպասարկվող» տարածքների համար

12. ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 888-Ն որոշմամբ սահմանվեց, որ <<սպասարկվող>> տարածքների համար ընտրել <<միասնական վարձակալ, ակտիվների մեկ կառավարիչ>> տարբերակը, պայմանավորված երկու հիմնական սկզբունքներով՝

Ա. ներկայումս տարբեր օպերատորների միջև առկա են միավոր ծախսերի, արդյունավետությունների և սակագների մակարդակների զգալի տարբերություններ, և

Բ. Երևան քաղաքում, Երևանից դուրս այլ շրջաններից, ավելի ցածր սակագներ ունենալը քաղաքական տեսանկյունից անընդունելի կլիներ:

ՀՀ կառավարությունը մանրամասն գնահատելով ոլորտի կառավարման տարբերակների առավելությունները և թերությունները (մեկ կառավարիչ, երկու կառավարիչներ և երեք կառավարիչներ) ընտրեց <<միասնական վարձակալ>> մոդելը, որպեսզի.

ա. ունենա միասնական սակագին (<<սպասարկվող>> տարածքների համար),

բ. ստեղծի այնպիսի պայմաններ, որոնց դեպքում մասշտաբի էֆեկտը կարող է հանգեցնել Երևանից դուրս գտնվող, ավելի մեծ ծախսեր պահանջող շրջաններում արդյունավետության բարձրացմանը՝ ուղղակիորեն հաշվի առնելով Երևան քաղաքում ավելի քիչ ծախսատար և կենսունակ գործառնությունը:

13. <<Միասնական վարձակալ>> մոդելի հետ կապված ռիսկերն են.

- հետագա ՊՄԳ պայմանագրի համար մրցակցությունը կարող է թուլանալ (գործող վարձակալը ստանում է մեծ առավելություն):
- 579 համայնքների պարտադիր ներգրավումը սպասարկման տարածք կարող է դժվար լինել առանձին համայնքներում առկա որոշ անհամաձայնությունների պատճառով:
- այն կսահմանափակի օպերատորի գործունեության թափանցիկությունը, կնվազեցնի տարբեր <<սպասարկվող>> տարածքներում ծառայություններ մատուցողների միջև համեմատական մրցակցության շրջանակը:
- այն համահունչ չէ ապակենտրոնացման քաղաքականությանը:

14. Հետևաբար, ՀՀ կառավարության ռազմավարությունն ընդգծում է հետևյալ հարցերի կարևորությունը.

- 1) Գույքի կառավարչի (ՋՏՊԿ) և կարգավորողի (ՀԾԿՀ) ռեսուրսների, դիրքի և իրավասությունների ուժեղացում:
- 2) ՊՄԳ պայմանագրերի կնքման գործընթացի, ԿՀՑ-ների և հետագա մոնիթորինգի ուժեղացում, որպեսզի ՋՏՊԿ-ն և ՀԾԿՀ-ն կարողանան ավելի լավ ապահովել միասնական վարձակալի կողմից որակյալ ծառայությունների հնարավորինս արդյունավետ մատուցումը:
- 3) Միասնական վարձակալի արդյունավետության և կենսունակության ուժեղացում՝ հատկապես ներկայումս ոչ շահութաբեր 4 տարածքներում (Երևանից դուրս), որպեսզի հնարավորինս շատ կրճատվեն տարբեր տարածքների միջև միավոր ծախսերի անհամապատասխանությունները: Այն դեպքում, եթե ծախսերի անխուսափելի տարբերություններ մնան, օրինակ՝ տոպոլոգիական,

աշխարհագրական և բնակչության խտության տարբերությունների պատճառով, ՋՏՊԿ-ն պետք է ընդգծի դրանք և թիրախները սահմանի դրանց միավոր ծախսերին համապատասխան (Վարձակալության պայմանագրում), որոնց դիմաց միասնական վարձակալը պետք է ձեռք բերի տարածքներին հատուկ թիրախները:

15. Դորշ-ը եզրակացնում է, որ այս միջոցառումները կարող են մեղմացնել նախատեսվող վարձակալության հետ կապված որոշ ռիսկեր: Սակայն եզրակացության մեջ ասվում է նաև, որ ապագայի ռիսկերը կպահպանվեն՝ 2031թ. հետո հետագա ՊՄԳ պայմանագրի համար մրցակցության նվազեցման հետևանքով: Հետևաբար՝ արդեն անհրաժեշտ է զգուշորեն դիտարկել այս ռիսկերի կառավարման և նվազեցման լրացուցիչ միջոցառումները:

2.2.2 Կառավարման տարբերակներ «Հսպասարկվող» տարածքների համար

16. Երկրորդ միջազգային խորհրդատվական ընկերությունը (ՍԵՍ (2014թ.)) գնահատեց կառավարման տարբերակներ <<Հսպասարկվող>> տարածքների համար և առաջարկեց, որ 5 տարբերակների ընտրանի առաջարկվի յուրաքանչյուր <<Հսպասարկվող>> համայնքին՝ սկսած ապահովելով նվազագույն աջակցության ծառայություն մինչև ամբողջական ներառում գոյություն ունեցող <<սպասարկվող>> տարածքներում (5 տարբերակները նկարագրված են 30-րդ կետի 5) ենթակետում): ՀՀ կառավարությունը ընդունել է սույն առաջարկը, սակայն <<Հսպասարկվող>> տարածքների համար իրականացման կարգն ավելի բարդ է, և հարկ կլինի, որպեսզի ՋՏՊԿ-ն նոր կարողություններ ձևավորի հանրային կապերի, ինստիտուցիոնալ և իրավական դաշտերում:
17. ԱԶԲ (2013թ.) առաջարկում է, որպեսզի պետությունը շարունակի մնալ Հայաստանի ջրային ոլորտում ներդրումների պլանավորման պատասխանատուն: Սակայն հեռանկարում այդ պարտականությունը, ինչպես նաև ինստիտուցիոնալ կառույցների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ՀՀ կառավարության ապակենտրոնացման ռազմավարությանը համահունչ, պետք է աստիճանաբար փոխանցվի համայնքներին, որպեսզի լավագույնս համակարգվի քաղաքաշինական պլանավորումը համակարգերի ընդլայնման հետ: ՀՀ կառավարությունը կփոխանցի սույն իրավասությունը միայն այն համայնքներին, որոնք ցանկանում են ստանալ այն և որոնք ստացել են համապարփակ ինստիտուցիոնալ զարգացում: Որոշ համայնքների համար սույն գործընթացը կարող է տեղի ունենալ հետագա տարիների ընթացքում:
18. ՏՀԶԿ (2014թ.) առաջարկում է <<վերևից ներքև>> և <<ներքևից վերև>> մոտեցումների զուգակցում, որոնց ներքո ՀՀ կառավարությունը ապահովում է ֆինանսական խթաններ համայնքներին, որպեսզի խրախուսի ներքևից վերև արձագանքներ և նպաստի միջհամայնքային համագործակցություն, որպեսզի հնարավոր լինի ապահովել մասշտաբայնություն և անցնել գյուղական վայրերում կայուն սանիտացիայի ապահովման:

Կան 579 Հսպասարկվող համայնքներ, և ժամանակ կպահանջվի (ա) նրանցից յուրաքանչյուրին առաջարկվող տարբերակների մասին տեղեկացնելու և որևէ տարբերակն ընտրելու հարցում աջակցելու, և (բ) լրացուցիչ աշխատանքներ և/կամ ծառայություններ ապահովելու համար, որպեսզի ընտրված տարբերակը ճիշտ աշխատի: Կարգավորումը խնդիր չի լինի Տարբերակ 5-ն ընտրող համայնքների համար (ամբողջական ներառում <<սպասարկվող>> տարածքում), սակայն Տարբերակ 1-ից մինչև 4-ը ընտրողների համար կլինի կարգավորման <<վակուում>>, քանի որ ՀԾԿ-ն ներկայումս չունի համապատասխան իրավասություն համայնքների և միջհամայնքային միավորումների նկատմամբ:

19. Անհրաժեշտ է կարգավորել միասնական վարձակալի սպասարկման տարածքից դուրս գտնվող բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման սակագների և համակարգերի օգտագործման թույլտվությունների հարցերը: Այսպիսի համայնքների համար պարզեցված ընթացակարգեր կարող են ընդունվել և ներդրվել անցումային ժամանակահատվածում: Մյուս մոտեցումը <<սպասարկման>> տարածքներից դուրս գտնվող համայնքների ընդգրկումն է միասնական վարձակալի սպասարկման տարածք:
20. << կառավարությունը ցանկանում է տեխնիկական աջակցություն ստանալ այս <<վերևից ներքև>> դյուրացումն ապահովելու համար կարողություններ ձևավորելու նպատակով՝ ելնելով ԱԶԲ-ի և ՏՀՀԿ-ի զեկույցներում բերված խորհուրդներից և առաջարկություններից:

2.3 Առաջնահերթությունների և փուլերի սահմանում

2.3.1 Առաջնահերթությունների սահմանման անհրաժեշտությունը

21. << կառավարության գնահատականը հստակ ցույց է տալիս, որ ֆինանսավորման կարիքները զգալիորեն գերազանցում են հասանելի ֆինանսական միջոցներին և ռեսուրսներին: Հետևաբար, ներդրումների համար պետք է սահմանվեն առաջնահերթություններ և փուլեր: Այն կարող է ընդգրկել հետևյալ ժամանակահատվածները՝
- 1) Կարճաժամկետ (0-5 տարի, սկսած 2016 թվականից), վարձակալության պայմանագրի մասով գնումների իրականացում և ներդրումային ծրագրի առաջին փուլ:
 - 2) Միջնաժամկետ (5-10 տարի և 10–15 տարի), նոր վարձակալության պայմանագրի գործողության ընթացքում ներդրումային ծրագրի երկրորդ և երրորդ փուլեր:
 - 3) Երկարաժամկետ (16 տարի և ավելի), նախատեսվող վարձակալության պայմանագրի ավարտի կարգավորումներ և հաջորդող ներդրումային ծրագիր:
22. Յուրաքանչյուր փուլի ավարտին միասնական վարձակալը կապահովի որոշակի արդյունքներ՝ ձեռքբերումները ցույց տալու և հանրության վստահությունն ամրապնդելու և, այդպիսով, նրանց՝ բարելավումների հաջորդ փուլում (համապատասխան սակագներով) հանրության վճարելու ցանկությունը խթանելու նպատակով (համապատասխան սակագների միջոցով):

2.3.2 Առաջնահերթությունների սահմանման մասով մոտեցումը

23. << կառավարությունը կցուցաբերի առաջնահերթությունների սահմանման երկբաղադրիչ մոտեցում՝ տվյալների և օժանդակող վկայությունների աստիճանական բարելավումով, որպեսզի հաջորդող փուլերում հնարավոր լինի գործնականում կիրառել ծախս-օգուտ վերլուծությունը և իրականացնել առաջնահերթությունների հիմնավոր սահմանում:

2.3.2.1 Առաջնահերթությունների սահմանման քայլերը

24. Առաջնահերթությունների սահմանման մասով << կառավարության մոտեցումը կլինի հետևյալը.

Քայլ 1. Կենտրոնանալ գույքի հետագա մաշվածությունից խուսափելու հարցի լուծման վրա, որպեսզի կանխվի հետագա վերակառուցման ծախսերի անհրաժեշտությունը (այսինքն՝ ապահովել, որ սակագներից ստացվող եկամուտն ավելի մեծ լինի, քան ՀևՊ ծախսերը, ինչպես նաև ապահովել պատշաճ սպասարկում՝ արդյունավետ մոնիթորինգի և նախատեսված վարձակալության պայմանագրի դրույթները խստորեն պահպանելու միջոցով):

Քայլ 2. Իրականացնել առաջնահերթ ներդրումներ (օրինակ, ջրաչափման համակարգի բարելավման մասով, և այլն): << կառավարությունը համաձայնվել է ՏՀՀԿ այն եզրակացության հետ, որ ջրահեռացման ոլորտը չի ունեցել մեծ գերակայություն և համարժեքորեն չի ֆինանսավորվել: Հետևաբար, << կառավարությունը առաջնահերթ

կիսամարի ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների բարելավումը, մասնավորապես «չսպասարկվող» տարածքներում:

Քայլ 3. Այնուհետև մշակել և կիրառել ջրային ոլորտի ծառայությունների առաջարկվող բարելավումների հետ կապված ծախսերի և օգուտների մասին վկայող տվյալներ, և, ներդրումների առաջնահերթությունները սահմանելու պարզ <<ծախսեր-օգուտներ վերլուծություններ>> գործիք:

25. << կառավարությունը 1-ին, 2-րդ և 3-րդ քայլերը կկիրառի հերթականությամբ: 3-րդ քայլը արդյունավետ ապահովելու համար ՋՏԿ-ին անհրաժեշտ կլինեն ավելի լավ տվյալներ ջրային համակարգերի վիճակի, արտանետումների ազդեցության մոդելավորման (օրինակ՝ ըստ Հայաստանի Հանրապետության ջրի որակի դասերի) մասին, ինչպես նաև վատ ջրահեռացման և կեղտաջրերի անբավարար մաքրման հետևանքով առաջացած խնդիրների մասշտաբի մասին՝ մասնավորապես <<չսպասարկվող>> տարածքներում:

26. Ինչպես առաջարկվել է ՏՀԶԿ-ի կողմից քայլերն իրականացնելիս՝ << կառավարությունը և ՋՏԿ-ն ա) կհամապատասխանեցնեն մոտեցումը իրավիճակին և կարիքներին ու բ) աստիճանաբար ձեռք կբերեն անհրաժեշտ օժանդակող տվյալներ:

2.4 Ռազմավարության տարբերակներ

2.4.1 Տարբերակ Ա. Բազային տարբերակ

27. Բազային տարբերակը կամ <<սովորականի նման բիզնես>> սցենարը (Տարբերակ Ա) էապես հանգեցնում է նախկին փորձառության շարունակությանը: Կմեծանա ակտիվների հետագա վատթարացման ռիսկը (այս ոլորտներում գործողությունների բացակայության պարագայում) և նախկին խնդիրները կկրկնվեն: Սա կբերի հետագա վերակառուցման մասով մեծ ծախսերի գոյացման, բարելավված ծառայությունների վերաբերյալ սպառողների ընկալողունակության նվազեցման և, հետևաբար, նախապատրաստում բարձրացած սակագներին, որոնք ուղղված են ծառայությունների բարելավմանը: Այսպիսով, առկա է բարձր և աճող պետական սուբսիդավորման ռիսկը:

28. Նման գործընթացներ ամենայն հավանականությամբ կարող են անընդունելի լինել և՛ դոնորների, և՛ սպառողների համար, որոնք, հնարավոր է, չցանկանան վճարել այդպիսի ծախսերի համար բարձրացված սակագների միջոցով, եթե վստահ չլինեն, որ դրա դիմաց կստանան ավելի լավ ծառայություն:

29. Արդյունքում << կառավարությունը ուսումնասիրեց բարելավման երկու տարբերակներ (Բ և Գ):

2.4.2 Ռազմավարության Տարբերակ Բ

30. << կառավարությունն արդեն իսկ կայացրել է երկու ռազմավարական որոշումներ (2014թ. օգոստոսի 14-ի N 883-Ն և N 888-Ն որոշումներ): Այդ որոշումների կարևոր դրույթներն են.

- 1) <<Սպասարկվող>> համակարգերը շահագործել և կառավարել 15 տարի ժամկետով վարձակալության պայմանագրի ձևաչափով, որի մեկնարկը նախատեսվում է 2016թ. հունիսի 1-ից:
- 2) Ընտրել <<միասնական վարձակալի>> տարբերակը, որը կշահագործի բոլոր <<սպասարկվող>> համակարգերը:
- 3) <<Սպասարկվող>> համակարգերի համար ընտրել միասնական սակագնի տարբերակը:

- 4) Հնարավորինս շուտ անցնել սակագնի այնպիսի մակարդակի, որը կապահովի բնակչությանը ԶՄ և ԶՀ ծառայությունների մատուցման ամբողջական ծախսաձածկում ամբողջ երկրում (Շ&Պ ծախսերը + ոլորտում անցյալում կատարված և ապագայում կատարվելիք կապիտալ ներդրումների մասով պարտքի սպասարկման ծախսերը):
- 5) Յուրաքանչյուր <<սպասարկվող>> համայնքին առաջարկել <<տարբերակների ընտրանի>>՝ սկսած նվազագույն աջակցության ծառայության մատուցումից մինչև ամբողջական ինտեգրում գոյություն ունեցող <<սպասարկվող>> տարածքներ (նվազագույն դեպք՝ առանց անհատական միացումների, նվազագույն դեպք՝ անհատական միացումներով, բազային դեպք՝ անհատական միացումներով, ամբողջական դեպք՝ առանձին շահագործմամբ, ամբողջական դեպք՝ գոյություն ունեցող կառավարչի տարածքին միանալով):

31. Այս որոշումները ամբողջովին դեռևս չեն իրականացվել: Դրանք, այսպիսով, ձևավորում են առավել արդյունավետ տարբերակներ Բ և Գ մի մասը:

32. Ռազմավարության Տարբերակ Բ-ն (որը, ըստ էության, այն տարբերակն է՝ առաջարկված Դորշի և ՍԵՍ-ի կողմից) բնութագրվում է տեխնիկական նպատակներին հասնելու համար նոր և զգալի չափի ներդրումով՝ հիմնված դրա օգտակարության վերաբերյալ անվերապահ ենթադրության վրա, սակայն առանց այդպիսի ներդրումների տնտեսական հիմնավորվածությունը ցույց տալու:

33. Այս տարբերակի հիմնական բնութագրերը հետևյալն են.

- 1) Ավելացած կապիտալ ծախսերի փուլային ծրագիր, որը ֆինանսավորվում է սակագնից ստացվող եկամտի և դոնորների վարկերի միջոցով՝ տեխնիկական աջակցության համար տրամադրվող որոշ դրամաշնորհների հետ միասին: 2016թ. մինչև 2030թ. վարկերի չափը մոտավոր կկազմի 279 միլիարդ ՀՀ դրամ կամ տարեկան միջինում 18.6 միլիարդ ՀՀ դրամ:
- 2) Հիմնական շեշտադրումը Քառորդ 1-ի և 2-ի վրա է (<<սպասարկվող>> տարածքների ջրամատակարարում և ջրահեռացում), իսկ Քառորդներ 3 և 4-ը (<<սպասարկվող>> տարածքների ջրամատակարարում և ջրահեռացում) արժանանում են ավելի քիչ ուշադրության: Տես Աղյուսակ Տ1-ը:
- 3) Քառորդ 1-ում շեշտը հիմնականում դրվում է ոչ եկամտաբեր ջրի (ՈԵՋ) ներկայիս շատ բարձր մակարդակը նվազեցնելու վրա:
- 4) Բարելավել ջրաչափումը:
- 5) ԶՏՊԿ-ի կարողությունների զարգացման համար բարելավել ակտիվների կառավարման գործընթացը և օգտագործելով ակտիվների ռեգիստրը, մշտադիտարկել ԶՄ և ԶՀ ակտիվների վիճակը:
- 6) <<Չսպասարկվող>> տարածքների դեպքում հիմնական շեշտը դրվում է համայնքներին ուղղորդելու, որպեսզի ընտրեն Ինստիտուցիոնալ Տարբերակ 5-ը (ներգրավում <<սպասարկվող>> տարածքներում), ինչպես նաև Տարբերակ 5-ի տարածքներում համապատասխան ներդրումներ կատարելու վրա:
- 7) Հետևյալ գործոնների վրա զուգահեռ գործողություններ, որոնք մշակվում են միասնական վարձակալի կենսունակությունը բարելավելու, ՀՀ կառավարության կողմից տրամադրվող սուբսիդիաներից կախվածությունը նվազեցնելու և ջրամատակարարման կազմակերպության արդյունավետության մակարդակը բարձրացնելու նպատակով.
- 8) - Սակագների ճշգրտումներ (մինչև ամբողջական ծախսաձածկման մակարդակ՝ կարճ անցումային շրջանից հետո)՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2014թ. օգոստոսի 14-ի N 883-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի պահանջները
- Թափանցիկ, թիրախավորված սուբսիդիաներ (այլ ոչ թե՛ անսահմանափակ սուբսիդիաներ, որոնց նպատակն ընթացիկ պակասուրդների ֆինանսավորումն է)

- Հանրային վստահության մակարդակի բարձրացում

- Թափանցիկ ՊՄԳ գնումների գործընթաց, որի նպատակն է <<մրցակցություն շուկայի համար>> սկզբունքի առավելությունների լիարժեք օգտագործումը

- Վարձակալության հուսալի պայմանագիր, որը ներառում է լուրջ խրախուսումներ՝ արդյունավետությունը բարելավելու համար: Այն չափավորում է բարելավվող ծառայությունների ազդեցությունը սակագների վրա:

- Ինստիտուցիոնալ բարեփոխում և հզորացում:


ա. Այս սցենարի շրջանակներում կիրառվում է միասնական վարձակալի մոդելը: Միաժամանակ իրականացվում է ջրային համակարգերի կառավարման (ՋՏԴԿ) և կարգավորող (ՀԾԿՀ) մարմինների հզորացում՝ մենաշնորհային միասնական վարձակալի հետ կապված ռիսկերը վերահսկելու համար:

բ. Իրավական փոփոխություններ (օրինակ՝ ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ոլորտի ուսումնասիրություններից ելնելով իրավական ակտի (ակտերի) ընդունում):

գ. **Գծագիր S3** բերված են այն սակագները (2014թ. կայուն գների պայմաններում), որոնք պահանջվում են տարբերակ Բ-ի ներքո ներդրումային ծրագրի լրիվ ծախսաձածկման համար:

Աղյուսակ S1. Տարբերակ Բ. Ներդրումների բաշխում, 2016թ.-2030թ., միլիարդ ՀՀԴ

	ՋՄ	Ընդհանուրի %	ՋՀ	Ընդհանուրի %	Ընդհանուր
Սպասարկող	114.5	41%	134.0	48%	248.6
Չսպասարկվող	30.4	11%	0.0	0%	30.4
Ընդամենը	145.0	52%	134.0	48%	279.0



2.4.3 Ռազմավարության Տարբերակ Գ

34. Ռազմավարության տարբերակ Գ-ն ունի նաև Տարբերակ Բ-ի 3)-ից-7(ա, բ) ենթակետերի հատկանիշներ: Սակայն շատ ավելի մեծ շեշտադրում է արված դիսկերի, ինչպես նաև Ա և Բ տարբերակների մասով սահմանափակումների վրա և ունի ավելի մեծ շեշտադրում պետական ներդրումային սահմանափակ միջոցներից կատարվող ծախսերի դիմաց առավել մեծ արժեք ստանալու վրա: Սա հնարավորություն է տալիս «չսպասարկվող» տարածքներին տրամադրել ավելի մեծ ներդրումներ:

35. Տարբերակ Գ-ն բնութագրվում է հետևյալով.

- 1) Ավելի մեծ շեշտադրում **տնտեսական և սոցիալական**, այլ ոչ թե հիմնականում տեխնիկական նպատակների վրա:
- 2) Իրատեսական հանրային ներդրումային արժեք՝ հաշվի առնելով, որ 15 տարվա վարձակալության վերջում սակագնի մակարդակը ընդունելի կլինի բնակչության համար (քանի որ այս պարամետրերը սերտորեն փոխկապակցված են): Հանրային այսպիսի ներդրումային գումարները կօգտագործվեն ավելի արդյունավետորեն, քան տարբերակ Բ-ում՝ առաջնահերթություն սահմանելու միջոցով 2016թ.-ից մինչև 2031թ. համար ներդրումները մոտավորապես կկազմեն 300 միլիարդ ՀՀԴ կամ միջինում 20 միլիարդ ՀՀԴ/տարեկան:
- 3) Ներդրումային միջոցների՝ ջրային ոլորտի չորս <<քառորդների>> (= ենթաօլորտների) միջև բաշխման ժամանակ ավելի մեծ ուշադրություն է դարձվում Քառորդներ 3-ին և 4-ին (<<չսպասարկվող>> տարածքների ջրամատակարարում և ջրահեռացում), և ավելի քիչ ուշադրություն՝ Քառորդ 1-ին և 2-ին (<<սպասարկվող>> տարածքների ջրամատակարարում և ջրահեռացում). տես ստորև աղյուսակ S2-ը և 36-39 կետերը: Տարբերակ Գ դեպքում հնարավոր կլինի <<չսպասարկվող>> տարածքներին տրամադրել ավելի մեծ ներդրումներ՝ առաջին քառորդի (<<սպասարկվող>> տարածքների ջրամատակարարում) ներդրումային կարիքների արդյունավետ գնահատման միջոցով: Չնայած հետևյալ միջոցառումները հասցեագրված են դիսկերի և տարբերակներ Ա և Բ սահմանափակումների հաղթահարմանը (ստորև նշված ենթակետ 4)-ից մինչև 13)-ը):
- 4) ՈւՋ-ի կրճատմանն ուղղված աշխատանքների հաստատում և իրականացում միայն այն դեպքում, եթե հստակ կերպով ցույց է տրվում, որ տնտեսական և ֆինանսական օգուտները զգալիորեն գերազանցում են ծախսերին:
- 5) Գոյություն ունեցող գույքի վերաբերյալ ՀՀ կառավարության համար տեղեկատվության բարելավմանն ուղղված ավելի մեծ ջանքեր (գույքի կառավարման բարձրակարգ փորձի միջոցով):
- 6) Զրամատակարարման և ջրահեռացման ոլորտի հնացած, Խորհրդային ժամանակաշրջանի նախագծային նորմերի բարելավում, քանի որ դրանք հանգեցնում են աշխատանքների ծավալների անհարկի ավելացման, հատկապես՝ գյուղական համայնքներում, ինչպես նաև նման կապիտալ ներդրումների համար չափազանց մեծ ծախսերի:
- 7) Միասնական վարձակալին ներկայացվող պահանջ, համաձայն որի նա պետք է հիմնավորի առաջարկվող բոլոր փոխարինման աշխատանքները, հատկապես՝ ստորգետնյա գույքի մասով (ջրատարներ, կոյուղագծեր, ճնշումային խողովակաշարեր):
- 8) Ավելի քիչ ծախսատար, պատշաճ տեխնոլոգիաների պիլոտային փորձարկում (օրինակ՝ <<շալցված ջուր>> խմելու ջրի իրական կարիքների համար, ջրի պահեստավորում տան տարածքում, փոքր խորություններով և փոքր տրամագծի խողովակներով կոյուղագծեր, ոչ էներգատար ԿՄԿ տեխնոլոգիաներ, մաքրված կեղտաջրերի և ԿՄԿ-ից ստացվող տիղմի անվտանգ կրկնակի օգտագործում):
- 9) Աշխատանքների գնումների գործընթացում մրցակցության ուժեղացում՝ շինարարության ծախսերը նվազեցնելու նպատակով:

- 10) Դոնորների աջակցության ավելի շատ կենտրոնացում SO ուղղությամբ և ավելի քիչ՝ վերանորոգմանն ուղղված ներդրումների վրա, ինչը հանգեցնում է և՛ գործառնությունների և՛ ներդրումների ավելի բարձր արդյունավետության:
- 11) Զարգացնել բնապահպանական մշտադիտարկումը և օգուտների մասով տվյալները, որոնք պայմանավորված են առկա իրավիճակով:
- 12) Հզորացնել ԶՏՊԿ-ի և ՀԾԿՀ-ի՝ միասնական վարձակալի գործունեությունը վերահսկելու և նրա տարեկան կապիտալ ծախսերի վերաբերյալ առաջարկները մանրակրկիտ ուսումնասիրելու և գնահատելու կարողությունները: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ նման մանրակրկիտ ուսումնասիրությունը և <<դրամի արժեքի>> կարևորումը կարող է զգալիորեն կրճատել ջրամատակարարման ծառայությունների ծախսերը և մեծացնել օգուտները:
- 13) Մարդակենտրոն մոտեցումը, ի տարբերություն տեխնոկրատ մատակարարմամբ պայմանավորված մոտեցման, ներգրավում է սպառողներին (մասնավորապես կանանց)՝ դրանով իսկ համաձայնեցնելով որոշումները իրենց կարիքների հետ:
- 14) Միասնական վարձակալը հանրությանը տրամադրում է իրեն ծառայությունների վերաբերյալ ավելի շատ տեղեկատվություն, ինչպես նաև համոզիչ կերպով ցուցադրում է, թե ինչպե՞ս են սակագները հանգեցնելու նշված ծառայությունների բարելավումներին:
- 15) **Գծագիր S4** բերված են այն սակագները, որոնք պահանջվում են (2014թ. կայուն գների պայմաններում) տարբերակ Գ-ի ներքո ներդրումային ծրագրի լրիվ ծախսաձածկման համար:
Աղյուսակ S2. 2016-2031թթ. 300 միլիարդ ՀՀ դրամի բաշխումը՝ հետևյալ ենթաոլորտների.

Ենթաոլորտ	Գումար (միլիարդ ՀՀ դրամ)	Ընդամենի %-ը
Ք1 = <<սպասարկվող>> տարածքների ՋՄ	92	30.7%
Ք2 = <<սպասարկվող>> տարածքների ՋՀ	75	25.0%
Ք3 = <<չսպասարկվող>> տարածքների ՋՄ	92	30.7%
Ք4 = <<չսպասարկվող>> տարածքների ՋՀ	41	11.7%
Ընդամենը	300	100.0%

36. Ընդհանուր ներդրումային բյուջեն այս չորս քառորդների միջև բաշխելու առնչությամբ կառավարությունը կիրառել է հետևյալ չափանիշները.


- Սպասարկվող տարածքներում ջրահեռացման ծրագրերին (Ք2 քառորդ) կհատկացվի ընդհանուր ներդրումային բյուջեի մոտ 25%-ը:

- Քանի որ չսպասարկվող տարածքներում ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման համակարգերի բարելավման անհրաժեշտությունը այնքան էլ հրատապ չէր, որքան սպասարկվող տարածքներում է, չսպասարկվող տարածքներում ջրահեռացման ծրագրերին (Ք4 քառորդ) կհատկացվի Ք2 քառորդին հատկացված ներդրումային միջոցների մոտ կեսը:

- Ներդրումային միջոցների մնացած մասը խոշորացված հաշվարկով հավասար կբաշխվի մնացած երկու քառորդների միջև (Ք1 և Ք3):

37. Քանի որ <<սպասարկվող>> տարածքների բնակչության թիվը գրեթե երեք անգամ գերազանցում է <<չսպասարկվող>> տարածքների բնակչության թվին, <<չսպասարկվող>> տարածքներում մեկ շնչի հաշվով կատարվող ջրամատակարարման ներդրումը, այս հատկացման շրջանակներում, երեք անգամ կգերազանցի <<սպասարկվող>> տարածքներում կատարվող ներդրմանը: Սա արդարացված է, քանի որ <<չսպասարկվող>> տարածքներում վերջին 15 տարիներին շատ քիչ ներդրումներ են կատարվել: Սա նաև համահունչ է ՀՀ կառավարության՝ <<չսպասարկվող>> համայնքներին խրախուսելու քաղաքականությանը, որպեսզի վերջիններս ընտրեն <<ցանցին միանալու>> տարբերակը (տարբերակ 5): Ներդրումային միջոցների հատկացումը Ք3 քառորդին պետք է համահունչ լինի <<ցանցին չմիացած>> համայնքների այն թիրախային թվին, որոնք <<միանալու են ցանցին>> վարձակալության սույն պայմանագրի շրջանակներում: Սա պայմանականորեն գնահատվել է 40% (այսինքն՝ 579 համայնքներից 230-ը):
38. Արդյունքում՝ Ք1 քառորդի մասնաբաժինը մոտավորապես կկազմի ընդհանուրի ընդամենը 30%-ը: Այս բյուջեի մեծ մասը օգտագործվելու է առկա «սպասարկման» ջրամատակարարման համակարգերի վերանորոգման համար, որպեսզի ա) կանխել գույքի վիճակի վատթարացումը, բ) նվազեցնել էլեկտրոէներգիայի ծախսերը, և գ) բարձրացնել ջրամատակարարման օրական տևողությունը ընդունելի մակարդակներին: Հետապնդելով սույն նպատակները՝ դրանք հաճախակիորեն կբերեն ՌԵԶ-ի նվազեցմանը, սակայն այն կլինի օգտակար հետևանք, քան ինքնին առաջնային նպատակ: Այդուհանդերձ, շատ դեպքերում ՌԵԶ-ի նվազեցման ծախսը ավելի բարձր է, քան օգուտը, որովհետև բացառապես Հայաստանում ջրամատակարարման համակարգ մտնող ջրի արժեքը ցածր է: Այդ առումով ՀՀ կառավարությունն ուսումնասիրելու է միասնական վարձակալի առաջարկները հիմնականում ուղղված ՌԵԶ-ի կրճատմանը՝ հավաստիանալու, որ դրանք տնտեսապես հիմնավորված են:
39. Չորս քառորդների միջև բաշխվող ներդրումային միջոցների վերջնական հատկացումը որոշվելու է ՀՀ պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և միասնական վարձակալի միջև բանակցությունների արդյունքում: Այս բանակցությունները դյուրացնելու նպատակով բոլոր ցուցանիշները հավաքագրվել են փոփոխված ՍԿՓՄ-ի մեկ միասնական թերթիկում:

Գծազիք S4. ՋՄ և ՋՀ ծառայությունների համար պահանջվող միասնական ծավալային սակագներ



40. Նաև, Տարբերակ Գ-ի շրջանակներում ՀՀ կառավարությունն ապահովելու է, որ 2031 թվականից հետո մի քանի կառավարիչներով սխեման (կամ նույնիսկ վերադարձը դեպի պետական ընկերության կառավարում՝ օրինակ 2010թ. Փարիզի ջրային ոլորտի ծառայությունների վերափոխանցումը համայնքին) դեռևս իրականանալի լինի, որպեսզի ապահովվի, որ նախատեսված վարձակալության պայմանագրի ավարտին գործող վարձակալը չունենա գերիշխող դիրքով պայմանավորված ոչ արդարացված առավելություն՝ ի վնաս հանրային շահի: Այդ իսկ պատճառով ՀՀ կառավարությունը կքննարկի այն հարցը, որ միասնական վարձակալը ներկայիս 5 ընկերությունների սպասարկման տարածքները պահպանի որպես առանձին հաշվետու միավորներ (ստորաբաժանումներ)՝ իրենց սեփական ԿՀՑ-ներով և արդյունավետության բարձրացման թիրախներով, որպեսզի խրախուսվի այդ 5 տարածքներում կատարողականի համեմատական մոնիթորինգը:

2.4.4 Վերլուծություն լավագույն տարբերակի ընտրության համար

41. Ի համեմատ Տարբերակ Ա-ի, Տարբերակ Բ-ն կհանգեցնի հետևյալին.

- 1) <<Սպասարկվող>> տարածքների միասնական վարձակալի բարելավված ֆինանսական կենսունակություն:
- 2) Մասշտաբի էֆեկտ և, այդպիսով, <<սպասարկվող>> տարածքների միասնական վարձակալի կողմից կատարվող ավելի արդյունավետ ՇևՊ ծախսեր:
- 3) Գոյություն ունեցող գույքի բարելավված վիճակ:
- 4) Ծառայության մատուցման բարելավում (ջրամատակարարման ծառայության ավելի երկար միջին օրական տևողություն <<սպասարկվող>> տարածքներում, հատկապես բավարարելով պահանջվող նվազագույն տևողությունը):
- 5) ՈեՋ-ի ավելի ցածր մակարդակներ:
- 6) Առկա ճեղքվածքը ֆինանսավորելու նպատակով տրվող սուբսիդիաների աստիճանական կրճատում: Սուբսիդավորման հստակ քաղաքականության իրականացում, որտեղ սուբսիդիաները թիրախավորվում են ԱԸՆԾ-ի (Աղքատության ընտանեկան նպաստի ծրագրի) միջոցով՝ թիրախ հանդիսացող գյուղական համայնքների անապահով ընտանիքների վիճակը բարելավելու նպատակով:

42. Տարբերակ Բ-ի շրջանակներում կապիտալ ծախսերի կարիքները զգալիորեն գերազանցում են հասանելի ֆինանսական միջոցներին և ռեսուրսներին: Այդպիսով, Տարբերակ Բ-ն կարող է հանգեցնել հետևյալ ռիսկերին.

- 1) Ֆինանսական ավելի մեծ ռիսկ: Այս տարբերակի շրջանակներում, կախվածությունն արտաքին պարտքից զգալիորեն կաճի: Ներկայումս, վարկերի միջազգային շուկայում փոխառությունների պայմանները բացառիկ բարենպաստ են: Ներկայումս միջազգային ֆինանսական շուկաներում տոկոսադրույքները (Libor, Euribor) ցածր մակարդակների վրա են: Սակայն այսպիսի բարենպաստ պայմանները դժվար թե շարունակվեն հաջորդ 16 տարիների համար: Եթե Libor և Euribor տոկոսադրույքները վերադառնային իրենց ավելի սովորական մակարդակներին՝ 3–5%, ապա տոկոսադրույքների հետ կապված բեռի վրա ազդեցությունը զգալի կլինի:
- 2) Անարդյունավետ ներդրումների ռիսկ և այն ակտիվների փոխարինում, որոնք դեռևս փոխարինման կարիք չունեն: Այս ռիսկը հատկապես բարձր է ստորգետնյա խողովակաշարերի փոխարինման դեպքում, ինչպիսին են ջրատարները և կոյուղագծերը:
- 3) Սխալ առաջնահերթությունների ռիսկ և տնտեսապես ոչ ձեռնտու ներդրումներ:
- 4) Ներդրումային պլանի ամբողջական ծախսածածկման համար անհրաժեշտ բարձր սակագները բաժանորդների կողմից կարող են համարվել անընդունելի:

43. Տարբերակ Գ-ից ստացվող օգուտները նման կլինեն Տարբերակ Բ-ին: Այն հասցեագրված կլինի Ա և Բ տարբերակների ռիսկերի և սահմանափակումների հաղթահարմանը, այնպես որ վերոնշյալ ռիսկերը ավելի փոքր կլինեն: Ավելին, 35-րդ և 40-րդ կետերում ներկայացված հիմնական հատկանիշները զգալիորեն կբարձրացնեն օգուտները և հնարավորություն կտան ապահովելու արդյունավետություն՝ ավելի բարձր որակի ջրամատակարարման ծառայություններ մատուցելու դեպքում: Այս տարբերակի իրականացման ընթացքում պետք է հաշվի առնել ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 883-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 2-րդ կետում նշված սակագներին ներկայացվող պահանջները:

44. Հաշվի առնելով ֆինանսական սահմանափակումները և հեռանկարը, բարելավված առաջնայնության և <<դրամի ավելի մեծ արժեքի>> համար հետևողական կարիքը նախընտրելի է Տարբերակ Գ-ն: Տարբերակ Գ-ի շրջանակներում իրատեսական ներդրումային պլանը կգսպի սակագների համապատասխան բարձրացումը, մինչդեռ տրված ներդրումային գումարի նպատակի համար ներդրումային ծրագրերի առաջնահերթությունների որոշումը կհանգեցնի ջրային ոլորտի ծառայությունների ավելի մեծ բարելավումների: Դոնորների նախնական արձագանքները, որոնց կդիմեն տրամադրելու լրացուցիչ վարկեր նշել են, որ իրենք կողմ են Տարբերակ Գ-ին:

45. Սույն Ռազմավարության Տարբերակ Գ-ն իրականացնելու համար պահանջվող հատուկ գործողությունները նկարագրված են ստորև:

2.5 Նախընտրած ռազմավարությանն օժանդակելու նպատակով իրականացվելիք բարեփոխումները

46. Ռազմավարության Տարբերակ Գ-ի շրջանակներում ՀՀ կառավարությունը կիրականացնի բարեփոխումներ հետևյալ ուղղություններով.

1) Իրատեսական ներդրումային պլանի սահմանում և իրականացում

2) Սակագներ՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2014թ. օգոստոսի 14-ի N883-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի պահանջները

3) Փոփոխություններ պետական աջակցության թիրախավորման և իրականացման մասերով (մասնավորապես՝ թափանցիկ թիրախավորված աջակցություն, ի տարբերություն ներկայիս ընթացիկ պակասորդը ֆինանսավորելու նպատակով հատկացվող համապատասխան սուբսիդիաների)

4) Հանրային վստահության մակարդակի բարձրացում

5) Գույքի ավելի արդյունավետ կառավարում (ջրային համակարգերի կառավարման մարմնի կարողությունների ամրապնդման միջոցով)

6) Ոչ եկամտաբեր ջրի կրճատում

7) Ավելի ուժեղ կարգավորում, ՊՄԳ պայմանագրերի կնքում՝ հստակ ԿՀՑ-ներով և արդյունավետ մոնիթորինգով

8) Ինստիտուցիոնալ բարեփոխումներ և հզորացում: Այս տարբերակի շրջանակներում կկիրառվի միասնական վարձակալի մոդելը: Միաժամանակ կիրականացվի ջրային համակարգերի կառավարման (ՋՏԿԿ) և կարգավորող (ՀԾԿՀ) մարմինների հզորացում՝ մենաշնորհային միասնական վարձակալի հետ կապված ռիսկերը վերահսկելու համար

9) Ուշադրություն գյուղական համայնքների խնդիրներին

10) Իրավական փոփոխություններ

2.6 Եզրակացություններ

47. Սույն ռազմավարությունը և ֆինանսավորման ծրագիրը միջազգային խորհրդատուի կողմից իրականացված մեծածավալ ուսումնասիրությունների ամփոփ տարբերակն: Ռազմավարությունը և ծրագիրը անհրաժեշտ է պարբերաբար արդիականացնել՝ դրանց սկզբունքների միջև ապագա հակասությունները հաղթահարելու նպատակով, ինչպես նաև ապահովելու համար, որ փաստաթուղթը համահունչ մնա գիտական և տեխնիկական առաջընթացի, Հայաստանի Հանրապետությունում և այլ երկրներում ջրային ոլորտի բարեփոխումների փորձից քաղված դասերի հետ:

48. ՀՀ կառավարությունը կօգտագործի սույն փաստաթուղթը դոնորների հետ քննարկելու և ներդրումային ծրագրերի վերաբերյալ համաձայնություն ձեռք բերելու նպատակով, ինչպես նաև <<սպասարկվող>> և <<չսպասարկվող>> տարածքների ԶՄ և ԶՀ ոլորտների միջև այդ ներդրումների բաշխման մասով առաջնահերթություններ սահմանելու համար: Այնուհետև ՀՀ կառավարությունը կգնահատի այդ ներդրումային ծրագրի ներքո ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների լրիվ ծախսաձածկման ապահովման համար անհրաժեշտ սակագները: Նաև կգնահատվի նման ծախսաձածկման դեպքում անցումային տարբերակի ազդեցությունը հանրային ֆինանսական աջակցության, տնային տնտեսությունների մասով մատչելիության և հաջորդող ԸՆԾ կողմից հատկացվող սուբսիդիաների վրա (այն տնային տնտեսությունների համար, որոնք չեն կարող ընդունել բարձրացված սակագները): Համապատասխանաբար կսահմանվեն սակագների մակարդակի վերաբերյալ մոտեցումներ՝ արտոնյալ ժամանակաշրջանում՝ 2016թ. մինչև 2031թ.:

49. Վարձակալության պայմանագրի ձեռքբերման մասով մրցութային փաստաթղթերում ՀՀ կառավարությունը տեղեկատվություն կտրամադրի (ա) պետական ներդրումների չափի և դրանց բաշխման, ինչպես նաև՝ (բ) սակագնի մասով իր դիրքորոշման վերաբերյալ: Այնուհետև կպահանջվի հայտատուներից հստակորեն ներկայացնել ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների այն մակարդակը, որոնք նրանք կարող են մատուցել՝ ելնելով յուրաքանչյուր ենթաոլորտի համար հանրային ներդրումների մակարդակից:

50. Սույն ռազմավարության շահառուներն են ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններից օգտվող բաժանորդները, ջրամատակարար ընկերությունների կողմից ներկայումս չսպասարկվող համայնքները, ծառայություններից ապագայում օգտվող ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ռազմավարությունը և ֆինանսավորման ծրագիրը քննարկվել է 2015 թվականի հունիսի 2-ին կայացած աշխատաժողովում՝ շահագրգիռ կողմերի, այդ թվում հասարակական կազմակերպությունների հետ:

51. Սույն փաստաթուղթը չի հանդիսանում դիրեկտիվ կամ գործողությունների պլան, այլ հանդիսանում է հնարավոր գործողությունների և որոշումների համակցություն, որոնք ուղղված են երկրում ջրային ոլորտի կարճաժամկետ և երկարաժամկետ խնդիրների լուծմանը և տնտեսապես ու սոցիալապես հիմնավորված են: Ռազմավարությունում և ֆինանսավորման ծրագրում բերված թվային գնահատականները հիմնականում ուղեցույցներ են, որոնք արտացոլում են հնարավոր արդյունքները:

3. Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ռազմավարության ֆինանսավորման ծրագիր

- 1) Վերջին 10 տարիների ընթացքում ջրամատակարար կազմակերպությունների սպասարկման տարածքում գտնվող համայնքներում ՋՋ կառավարման համար, ՊՄԳ ձևերի ընդունման հիմնական հիմնավորումը եղել է ծառայությունների բարելավումը: Այս ռազմավարությունը պսակվել է հաջողությամբ: Հաշվի առնելով այդ, ՀՀ կառավարությունը որոշել է մինչև 2016 թվականի հունիսի 1-ը երկարաձգել ՊՄԳ գործող ձևերի շրջանակում կառավարումը սպասարկման տարածքում գտնվող ամբողջ համայնքներում:
- 2) ՊՄԳ օպտիմալ ձևի ընտրության նպատակով ՀՀ կառավարությունը մեկնարկել է ուսումնասիրություններ, որպեսզի որոշի մասնավոր կառավարիչների՝ Հայաստանում ՊՄԳ տարբեր կարգավորումներով հետաքրքրվելու մակարդակը: Խորհրդատուն իրականացրեց ուսումնասիրություն, և արդյունքները հստակորեն ցույց տվեցին, որ ՊՄԳ շուկայում դեռևս ակտիվ մի քանի միջազգային կազմակերպություններ հետաքրքրված չեն Հայաստանում կոնցեսիայի պայմանագրի կնքմամբ, սակայն հետաքրքրված են վարձակալության պայմանագրով, հատկապես եթե վարձակալությունն ընդգրկում է ողջ սպասարկման տարածքը:
- 3) Ի տարբերություն վարձակալության պայմանագրի՝ կոնցեսիայի պայմանագիրը
ա. Ունի ավելի երկար տևողություն (որպես կանոն 25-30 տարի, ի տարբերություն վարձակալության պայմանագրի, որի տևողությունը 10-15 տարի է), և ընդգրկում է մասնավոր օպերատորի կողմից զգալի ներդրումներ իրականացնելու պարտավորություն (մինչդեռ վարձակալության պայմանագրի շրջանակում ըստ սահմանման, գործնականում ներդրում կատարելու պարտավորությունը սովորաբար բավականին ցածր է):
- 4) Հենց սա է պատճառը, որ միջազգային մասնավոր կառավարիչները ներկայումս չեն ցանկանում տրամադրել զգալի ներդրումներ փոքր շուկայում և նախընտրում են վարձակալության ձևը կոնցեսիայից: Սա հատկանշական համաշխարհային միտում է 2008 թվականի ֆինանսական ճգնաժամից սկսած:
- 5) Եթե նույնիսկ միջազգային ընկերությունները հետաքրքրված լինեն կոնցեսիայով, կասկածելի է, թե արդյոք նման ՊՄԳ ձևն օպտիմալ տարբերակ է հանրապետության ջրային ոլորտի համար, քանի որ անհրաժեշտ է, որպեսզի մասնավոր կառավարիչը պահանջվող միջոցները փոխառի միջազգային կապիտալի շուկայից և վճարի ավելի բարձր տոկոսադրույքներ, քան սուվերեն փոխառում, ինչպես օրինակ ՀՀ կառավարությունը:
- 6) ՀՀ կառավարությունը ՋՏԴԿ-ի միջոցով կշարունակի որոնել դրամաշնորհներ տարբեր միջազգային կազմակերպությունների ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում ներդրումներ իրականացնելու համար (օրինակ՝ ԵՄ, ԱՄՆ ՄԶԳ, ՄԱԶԾ, ՃՄՀԳ և այլն), ինչպես նաև միջազգային կազմակերպությունները: Սակայն նման կազմակերպություններից հասանելի գումարը հավանաբար քիչ է ոլորտի ընդհանուր անհրաժեշտ ներդրումային կարիքների հետ համեմատած (հաճախ նման դրամաշնորհները հասանելի են միայն նոր տեխնոլոգիաների փորձարկման նպատակով տեխնիկական աջակցության կամ պիլոտային ծրագրերի համար):
- 7) ՀՀ կառավարությունը ակնկալում է, որ այս ներդրումների ֆինանսավորման մեծ մասը լինի դոնոր վարկերից, ինչպես որ եղել է վերջին 10 տարիների ընթացքում: Ուստի, շեշտը պետք է դրվի այն պայմանների իրականացման վրա, որոնք հնարավոր կլինեն միջազգային ֆինանսական հաստատությունների (դրանք են՝ ՀԲ, ԱԶԲ, ՎԶԵԲ, ԵՆԲ) և երկկողմանի զարգացման ֆինանսական հաստատությունների (դրանք են KfW բանկը, JBIC) համար՝ Հայաստանի ջրային ոլորտին նման վարկեր տրամադրելու նպատակով:

- 8) Իրատեսական է ակնկալել, որ միասնական վարձակալը կտրամադրի որոշակի ներդրումային միջոցներ՝ վարձակալության պայմանագրի շրջանակում: Սրա վերաբերյալ լուսաբանվել է EMRP հիմնադրամի կողմից <<Երևան Զուր>> ՓԲԸ-ի հետ կնքված ընթացիկ վարձակալության պայմանագրի ներքո: Պայմանագրային պարտավորությունը <<Երևան Զուր>> ընկերությունից պահանջում է տարեկան ծախսել շուրջ 2 միլիոն ԱՄՆ դոլար (շուրջ 1 միլիարդ ՀՀ դրամ/տարեկան) իր իսկ սեփական ռեսուրսներից՝ պահպանման և փոքրածավալ ներդրումային ծրագրերի իրականացման համար:
- 9) Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում առաջանում են արտակարգ իրավիճակներ, և անհրաժեշտ է, որպեսզի միասնական վարձակալը միջամտություն ցուցաբերի և չի կարող սպասել հիմնական սարքավորումների գնման համար գնումների ընթացակարգերի ավարտմանը (այսինքն, ինչպես օրինակ՝ Էլեկտրական շարժիչի կամ չափիչ սարքի փոխարինում): Անհրաժեշտ է, որպեսզի միասնական վարձակալը ճկուն կերպով միջամտի առանց ուշացումների, քանի որ միջամտությունը ուշացնելը կհանգեցնեն բարձր ծախսերի: Նման աշխատանքներն ունեն վերանորոգման/պահպանման բնույթ՝ ի տարբերություն վերականգնման/փոխարինման բնույթի աշխատանքների: Ուստի, վարձակալության պայմանագրերով մասնավոր օպերատորները պատրաստակամ են տրամադրել նման միջոցներ, քանի որ կարող են դրանք ծածկել վարձակալության պայմանագրի 15 տարիների ընթացքում:
- 10) Համապատասխանաբար, վարձակալության նոր պայմանագրի ներքո (2016թ. <<սպասարկվող>> տարածքների համար միասնական վարձակալի մասով) կառավարությունը նախատեսում է պահանջել վարձակալից տրամադրել ՊՎԸԱ ֆոնդ իր սեփական միջոցների հաշվին՝ տարեկան 5 միլիոն ԱՄՆ դոլարի չափով (2.5 միլիարդ ՀՀԴ տարեկան, կամ 37.5 միլիարդ ՀՀԴ 15 տարիների ընթացքում) ինչպես 8.8 միլիարդ ՀՀԴ ՊՎԸԱ ֆոնդը՝ <<Երևան Զուր>> վարձակալության պայմանագրի ներքո: Այս գումարն ուղղակիորեն կտրամադրվի միասնական վարձակալի կողմից և կավելացվի ներդրումային միջոցներին:
- 11) Սահմանված (սակագնի միջոցով) ներդրումների մակարդակի մասով ընդհանուր ֆինանսական ծրագիրը 15 տարի ժամկետայնության վարձակալության պայմանագրի համար ներկայացված է **Աղյուսակ 3.1-ում:**

Աղյուսակ 3.1 2016թ. մինչև 2031թ. ժամանակաշրջանում 15 տարվա ներդրումների ֆինանսավորման ծրագիր (միլիարդ ՀՀԴ)

	Անվանում	Միասնական վարձակալի կողմից (սակագնով)	Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ (ներառած ՀՀ կառավարության համաֆինանսավորում)	Ընդամենը
1.	ՊՎԸԱ տեսակի ֆոնդ	37.5	-	37.5
2.	Վերանորոգման և նոր տեսակի աշխատանքներ			
2.1	Առկա և նոր ծրագրերի ներքո		101.5	101.5
2.2	Ապագայի նոր ծրագրերի ներքո		161.0	161.0
	Ընդամենը	37.5	262.5	300.0

12) Ինչպես երևում է ընդհանուրի 90%-ը կկազմեն պաշտոնական վարկային կամ դրամաշնորհային միջոցներով հատկացված գումարները (ՄՖՀ-ներ և ԵՀՖՀ-ներ): Աղյուսակում ցույց է տրված նաև, որ պահանջվող ընդհանուր դոնորական վարկի մեկ երրորդը սկզբունքորեն արդեն համաձայնեցված է: Չորս ներդրումային ծրագրերի մասով բազմադոնորային ֆինանսավորման (198 միլիոն Եվրո ընդհանուր դոնորական ֆինանսավորման պարտավորություններ) բանակցություններն ընթացիկ փուլում են:

13) Ակնկալվելիք դրամաշնորհային ֆոնդերը տարբեր ոչ-կառավարական աղբյուրների կողմից չեն ցուցադրված Աղյուսակ 3.1-ում, քանի որ այս փուլում դժվար է գնահատել դրանց հստակ չափը, սակայն չի ակնկալվում, որ այդ ներդրումը ընդհանուրի 10%-ից ավելին կլինի:

14) ՀՀ կառավարությունը նպատակադրված կլինի ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան միջազգային դոնորին շարունակել նման վարկեր տրամադրել Հայաստանի Հանրապետության ջրային ոլորտին: Այդ պայմանները կարող են ներկայացվել հետևյալ կերպ՝

ա. Լրիվ ծախսաձեռնարկային քաղաքականության իրագործման պարտավորություն (անցումային կարճ ժամանակաշրջանից հետո)

բ. Ոլորտի արդյունավետ կառավարման պարտավորություն՝ երաշխավորելով, որ վարկային ֆոնդերն օգտագործվում են արդյունավետ կերպով:

15) Հայաստանի Հանրապետության երաշխավորությամբ վերցված վարկային և դրամաշնորհային ներդրումային ծրագրերը իրականացնելու համար լիազոր պետական մարմնի՝ ՋՏՊԿ-ի կազմում կստեղծվի ներդրումային ծրագրերի իրականացման ստորաբաժանում: Միասնական վարձակալի միջոցների հաշվին իրականացվող ներդրումային ծրագրերը պետք է համաձայնեցվեն լիազոր պետական մարմնի՝ ՋՏՊԿ-ի հետ:

16) Ներկայումս, ջրի գործող սակագները բավականին ցածր են լիարժեք ծախսերից և չեն ծածկում նույնիսկ ՇԱՊ ծախսերը: <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի մասով սակագները չեն վերանայվել 2009թ.-ից ի վեր, ՅՏԶԿ-ի համար՝ 2010թ.-ից:

17) ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 883-Ն որոշման համաձայն սակագինը պետք է ներառի պահպանման և վերանորոգման ընդլայնված աշխատանքների ծախսերը, ինչը կապահովի ջրամատակարարման համակարգի նորմալ գործունեությունը և պահպանումը: Վարձակալության վճարը կսահմանվի պարտքի սպասարկման չափին (կամ դրա որոշակի մասին) համապատասխան:

18) ԱԶԲ-ի խորհրդատուն կառավարությանը տրամադրել է ֆինանսական մոդել (այն կրում է ՍԿՓՄ անվանումը)՝ հաջորդող 15 տարիների ընթացքում ջրամատակարարման ոլորտում հանրային ներդրումի մակարդակների, և, հետևաբար, ջրամատակարարման և ջրահեռացման սակագների մակարդակների միջև պատշաճ հավասարակշռություն սահմանելու նպատակով՝ հաշվի առնելով ծախսաձեռնարկային տարբեր մակարդակները:

19) 2016թ.-2030թ. ժամանակահատվածում պահանջվող սակագների մակարդակը (2014թ. կայուն գների պայմաններում և ներառյալ 20% ԱԱՀ), որը կապահովի ՋՄ և ԶՀ ոլորտին 300 միլիարդ ՀՀԴ ներդրումները, ներկայացված է գծագիր S4-ում:

4. Ռազմավարության մշակում

4.1 Իրականացվելիք գործողություններ

4.1.1 Ռազմավարության տարբերակ Գ-ի ներքո իրականացվելիք գործողությունները ներկայացված են ստորև՝ **Աղյուսակ 4.1**-ում:

4.1.2 ՀՀ կառավարությունը՝ ՋՏՊԿ-ի միջոցով գնել է Անցումային խորհրդատուի խմբի (ԱԽԽ) ծառայությունները՝ աջակցելու համար նախատեսվող Վարձակալության պայմանագրի ՊՄԳ գնումների գործընթացի նախապատրաստման և իրականացման հարցում: ԱԽԽ-ն, ՏԱ-ով սահմանված ի թիվս այլ առաջադրանքների, պետք է կատարի նաև հետևյալը՝

Ա. Մանրամասն ուսումնասիրի ներդրումային կարիքների և ծախսերի առկա գնահատականները ԱԶԲ-ի խորհրդատուների կողմից վերհանված հիմնական գործոնների տեսանկյունից, որպեսզի բաշխի ընդհանուր հանրային ներդրումային գումարը չորս քառորդ մասերի միջև:

Բ. Մանրամասն ուսումնասիրի հիմնական ենթադրությունները, որոնք ազդեցություն ունեն ջրի սակագնի պահանջվող մակարդակի վրա Վարձակալության պայմանագրի ժամանակահատվածում: Անհրաժեշտ է, որ այս ենթադրություններն ավելի ամրապնդվեն ԱԽԽ-ի կողմից, քանի որ դրանք պետք է հայտարարվեն հայտատուներին Վարձակալական պայմանագրի մրցութային փաստաթղթերում: ԱԶԲ-ի խորհրդատուները վերհանել են այս հիմնական գործոնները և ենթադրությունները (մի քանիսը): Դրանք ներառում են՝

- ջրամիացումների քանակի ավելացումներ
- ջրի ծավալի վաճառքի ավելացում
- չհաշվառվող ջրի նվազում
- հավաքագրման մակարդակի բարձրացումներ
- աշխատանքի արտադրողականության և արդյունավետության բարելավումներ,

հատկապես Երևանից դուրս գտնվող տարածքներում իրականացվող գործառնությունների համար:

Գ. Օգտագործել սակագնային կանխատեսման փոփոխված մոդելը (ՍԿՓՄ)՝ ՀՀ կառավարությանը ընդհանուր կապիտալ ծախսերի գումարի սակագնային քաղաքականության մանրամասների վերաբերյալ որոշումներ կայացնելու հարցում աջակցելու համար՝ կատարելով տարբեր անցումային և սուբսիդավորման սցենարների սակագնային կանխատեսումներ: (Նկատարում. ՍԿՓՄ-ն առաջացել է Սակագնային կանխատեսման մոդելից, որը մշակվել է <<DHInfrastructure>> կազմակերպության կողմից Համաշխարհային բանկի աջակցությամբ): ԱԶԲ-ի խորհրդատուները տրամադրել են մոդելի կառուցվածքի, մշակումների, տվյալների և ենթադրությունների վերաբերյալ փաստաթղթեր, և նրանք հասանելի են աջակցելու ՋՏՊԿ-ին այս մոդելի կիրառման գործընթացում):

Դ. Մշակել կատարողական հիմնական ցուցանիշներ և դրա նպատակային արժեքները, որպեսզի հնարավորություն ընձեռվի ՋՏՊԿ-ին վերահսկելու միասնական վարձակալի կատարողականը և ստուգելու, որ նա մշտապես իրականացնում է գույքի արդյունավետ կառավարում: Առանձին կատարողական հիմնական ցուցանիշները և նպատակները կհստակեցվեն ներկայիս 5 ջրային ընկերություններից յուրաքանչյուրի սպասարկման տարածքների համար, որոնք կդառնան միասնական վարձակալի առանձին հաշվետվությունների մասեր: Սա պետք է վերահսկի Երևանից դուրս գործող ստորաբաժանումների կատարողականի բարելավմանը հասնելու նպատակի առաջընթացը, որպեսզի հասնեն Երևանի ներկայիս մակարդակին: Պետք է նաև ապահովվի, որ ՀՀ կառավարությունը ունենա մի շարք տարբերակներ՝ նախատեսվող 15 տարվա վարձակալության պայմանագրի ավարտին:

4.2 Ռազմավարության իրագործման մշտադիտարկում

4.2.1 ՀՀ կառավարությունը 5 տարվա պարբերականությամբ, անհրաժեշտության դեպքում, կիրականացնի ռազմավարության վերանայում՝ ուշադրություն դարձնելով կատարողական հիմնական ցուցանիշների վրա, որոնք վերաբերվում են գործողությունների ծրագրի իրականացմանը՝ ներկայացված Աղյուսակ 4.1-ում: Մասնավորապես, կիրականացվի խորը վերլուծություն վարձակալության պայմանագրի ավարտից 12-ից մինչև 18 ամիս առաջ՝ պայմանագրի ավարտից հետո ոլորտի կառավարման հետ կապված սկզբունքները սահմանելու նպատակով: Լիարժեք արդյունավետություն ապահովելու համար այս վերլուծությունը նպատակահարմար է իրականացնել անկախ փորձագետների կողմից, հավանաբար ՄՖՀ-ների աջակցությամբ:

Աղյուսակ 4.1 Ռազմավարության տարբերակ Գ-ի իրականացումն ապահովող գործողություններ

NN ը/կ	Գործողության նկարագրություն	Պատասխանատու	Կատարման ժամկետ	Արդյունք
1	Իրատեսական ներդրումային պլանի որոշում			
1.1	Քննարկել ջրային ոլորտի 2016-2030թթ. ժամանակահատվածում իրատեսական կապիտալ ծախսերի հարցը, որոշելու դրանց առաջնահերթությունների և նախնական բաշխման շուրջ չորս <<քառորդների>> միջև (ԶՄ և ԶԶ մասնաբաժիններ) բաշխումը:	ԶՏՊԿ	սեպտեմբեր-հոկտեմբեր 2015թ.	Համաձայնեցված թիրախային թվեր ԶՈՌՓ-ում: (Վարձակալության պայմանագրի մրցության փաթեթում հայտատուներին տրվող թվերը կարող են որոշ չափով տարբեր լինել):
1.2	Բանակցություններ վարել ներդրումային գումարի համար դոնորի աջակցությունը ստանալու (առնվազն սկզբունքորեն) և գումարի բաշխման նպատակով, ելնելով ՀՀ կառավարության կողմից սահմանված առաջնահերթություններից:	ԶՏՊԿ << Ֆիննախ	հոկտեմբեր- նոյեմբեր 2015թ.	Հիմնական դոնորներից (WB, ADB, EU, EIB, EBRD, KfW) այս հարցի վերաբերյալ սկզբունքային համաձայնության վերաբերյալ գրությունների ստացում:
1.3	Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտը կանոնակարգող շինարարական նորմերում և կանոններում կատարել ռազմավարությունից բխող անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ՝ դրանք միջազգային լավագույն կիրառելի պրակտիկային համապատասխանացնելու նպատակով:	<< ՔՆ ԶՏՊԿ	2016-2018թ.թ.	Միջազգային լավագույն կիրառելի պրակտիկային համապատասխանեցված շինարարական նորմեր և կանոններ:
2	Սակագներ			
2.1	Նախապատրաստել գործողություններ ՀՀ կառավարության 14.08.2014թ. N 883-Ն որոշման կատարումն ապահովելու համար կապված՝ • Լրիվ ինքնաձախսաձեռքով սակագնին անցման		նոյեմբեր 2015թ.	ՀՀ կառավարության 14.08.2014թ. N 883-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի դրույթների իրականացման ապահովում:

NN ը/կ	Գործողության նկարագրություն	Պատասխանատու	Կատարման ժամկետ	Արդյունք
	փուլի տևողությունը և ձևը ՀՀ կառավարության ֆինանսական աջակցության մակարդակը առկա վարկերի պարտքի սպասարկման վերաբերյալ:	ՋՏՊԿ ՀՀ Ֆիննախ		
2.2	Միասնական վարձակալը հանրությանը պետք է տրամադրի ա) ծավալուն և համոզիչ ապացույց իրենց ծառայությունների և բարելավման աշխատանքների վերաբերյալ, բ) տեղեկատվություն սակագների սահմանման վերաբերյալ: Արձագանքել սպառողների բողոքներին՝ ԿՀՑ-ների կատարման վերաբերյալ:	ՋՏՊԿ Միասնական վարձակալ	հունիս 2016թ. շարունակական	Սպառողների համար անհրաժեշտ տեղեկատվության ապահովում:
2.3	Հանրային տեղեկատվական արշավներ ՋՋ և ԶՀ ոլորտի ներդրումային պլանի և միասնական սակագների մասին՝ ընդգծելով, որ դրանք կապահովեն օպտիմալ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ:	ՋՏՊԿ	հունիս 2016թ. շարունակական	Հանրային իրազեկման արշավներ:
3	Գույքի կառավարում			
3.1	Միասնական վարձակալի կողմից գույքի արդյունավետ կառավարման իրականացում՝ պատշաճ ծառայություններ մատուցելու համար:	ՋՏՊԿ Միասնական վարձակալ	հունիս 2016թ. շարունակական	Գույքի կառավարման արդյունավետ համակարգի ներդրում:
3.2	ԿՀՑ-ների վերաբերյալ միասնական վարձակալի հաշվետվություններ:	ՋՏՊԿ Միասնական վարձակալ	հունիս 2017 թ. շարունակական	ԿՀՑ-ների վերաբերյալ միասնական վարձակալի հաշվետվություններ և բացատրություններ ԿՀՑ-ների չկատարման դեպքում:

NN ը/կ	Գործողության նկարագրություն	Պատասխանատու	Կատարման ժամկետ	Արդյունք
4	Ուժեղացված կարգավորում և ինստիտուցիոնալ փոփոխություններ			
4.1	Վերահսկել միասնական վարձակալի ԿՀՑ-ների կատարումը և բացահայտել թիրախների հնարավոր անհամապատասխանության պատճառները:	ԶՏՊԿ	հունիս 2017թ. շարունակական	ԿՀՑ-ին հասնելու միասնական վարձակալի առաջընթացի գնահատման հաշվետվություններ:
4.2	Միասնական վարձակալից պահանջել հիմնավորել բոլոր առաջարկվող պահպանման և վերանորոգման ընդլայնված աշխատանքները, հատկապես ստորգետնյա խողովակաշարերի մասով (ջրատարներ, կոյուղիներ և այլ հիդրոտեխնիկական կառուցվածքներ):	ԶՏՊԿ Միասնական վարձակալ	Շարունակական 15 տարի տևողությամբ վարձակալության պայմանագրի գործողության ժամկետում	Պահպանման և վերանորոգման ընդլայնված աշխատանքների տարեկան ծրագրերի հաստատում ԶՏՊԿ-ի կողմից:
4.3	ԶՏՊԿ-ի կարողությունների ամրապնդում՝ միասնական վարձակալի տարեկան կապիտալ ծախսերի առաջարկների գնահատման համար:	ԶՏՊԿ, ՀՀ Ֆիննախ	հունիս 2016 թ. շարունակական	ԶՏՊԿ-ի և ՀՀ Ֆիննախ-ի աշխատակազմերի ուժեղացում և վերապատրաստում:
4.4	Ամրապնդել ԶՏՊԿ-ի կարողությունները՝ միասնական վարձակալի ԿՀՑ-ների կատարումը վերահսկելու և աջակցելու նպատակով:	ԶՏՊԿ	հունիս 2017թ. շարունակական	ԶՏՊԿ-ի աշխատակազմերի ուժեղացում և վերապատրաստում:
5	Տվյալների, կարողությունների և վերլուծության բարելավում			

NN ը/կ	Գործողության նկարագրություն	Պատասխանատու	Կատարման ժամկետ	Արդյունք
5.1	Ընդլայնել բնապահպանական մոնիթորինգը, տվյալների հաշվետվությունը և վերլուծությունը:	ՀՀ ԲՆ ԶՏՊԿ	հունիս 2017թ. շարունակական	Տվյալներ ա) մաքրված կոյուղաջրերի որակը (օրինակ ջրահեռացման համակարգերից և ԿՄԿ-ից) և բ) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում:
5.2	Մշակել պրակտիկ ծախսեր-օգուտներ վերլուծության (ԾՕՎ) գործիքների լրակազմ՝ ջրամատակարարման ծառայությունների բարելավման բարձրարժեք տարբերակների գնահատման ու հիմնավորման, ինչպես նաև դրանց արդյունավետության բարձրացման համար:	ԶՏՊԿ	հունիս 2017թ. շարունակական	Ծախսեր-օգուտներ վերլուծության (ԾՕՎ) գործիքների լրակազմ
5.3	Մշակել ջրամատակարարման և ջրահեռացման բարելավման հիմնական օգուտների գնահատումների տվյալների բազա:	ԶՏՊԿ	հունիս 2017թ. շարունակական	Գնահատումների տվյալների բազաի ստեղծում
5.4	Մշակել տեխնիկական և տնտեսական կարողություններ՝ ծախսեր-օգուտներ վերլուծության գործիքները կիրառելու և դրանց արդյունքները մեկնաբանելու համար:	ԶՏՊԿ	հունիս 2017թ. շարունակական	ԾՕՎ-ի գործիքների կիրառման հմտություններով վերապատրաստված աշխատակազմ
5.5	Մշակել տվյալներ և զարգացնել գիտելիքներ համակարգերի և ՈԵՋ աղբյուրների վերաբերյալ, որպեսզի որոշել տարբերակները և ներդրումային ծրագրերում ներառվող միջոցառումների կարևորությունը:	ԶՏՊԿ (խորհրդատուների աջակցությամբ)	հունիս 2016թ. շարունակական	Ջրամատակարարման համակարգերի (ցանցերի) մոդելներ և նախագծեր՝ չափման տարածքների համար

Աղյուսակ 4.2. Իրավական և կարգավորման բարեփոխումների իրականացման գործողությունների պլան

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ասիական զարգացման բանկի միջև ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագրի փոխըմբռնման հուշագրի (այսուհետ՝ Հուշագիր) հավելված 2-ի 1.3 կետի, ինչպես նաև ՀՀ վարչապետի 2014 թվականի փետրվարի 24-ի N134-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի 2-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներն ապահովելու նպատակով ՀՀ վարչապետի 2014 թվականի մարտի 17-ի N192-Ա որոշմամբ ստեղծվել էր աշխատանքային խումբ, որն ուսումնասիրել է ջրային ոլորտի հիմնական մարմինների գործառույթներն ու պարտականությունները և ներկայացրել առաջարկություններ դրանց վերանայման ու բարելավման համար:

Ելնելով այդ առաջարկություններից՝ ՀՀ կառավարությունը նախաձեռնել է օրենսդրական փոփոխությունների իրականացում: Ներկայումս ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են <<Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին<<, <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> և <<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքները: Հստակ սահմանվել են ջրային ոլորտում ամբողջական կարգավորում իրականացնելու համար ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին վերապահված իրավասությունները, այդ թվում՝ սակագնային կարգավորման իրականացման, ոլորտում գործունեության լիցենզավորման, տրամադրված լիցենզիաների պայմանների կատարման նկատմամբ հսկողության իրականացման, իսկ դրանց խախտման դեպքում տույժերի կիրառման, ինչպես նաև ջրամատակարարման և ջրահեռացման կանոնների, պայմանագրերի օրինակելի ձևերի սահմանման վերաբերյալ:

Բացի այդ, սահմանվել է <<սակագին>> հասկացությունը՝ որպես ջրամատակարարման և/կամ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման համար ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված գին: Այս մոտեցման հիման վրա ՀՀ ջրային օրենսգրքի հետևյալ սկզբունքը՝ <<կարգավորվող սակագնի սահմանված չափը հաշվարկային սակագնի արժեքից փոքր լինելու դեպքում ջրօգտագործումից առաջացող դրամամուտքի դեֆիցիտի նախատեսում պետական բյուջեում՝ սուբսիդիաների կամ օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնությունների տեսքով: Զրօգտագործողների վճարունակության բարձրացմանը զուգընթաց լրավճարները պետք է նվազեցվեն, և կարգավորվող սակագնի չափը պետք է մոտեցվի հաշվարկային սակագնի արժեքին>>, վերանայվել է և սահմանվել է որպես <<պետական բյուջեում սուբսիդիաների կամ օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնությունների նախատեսում ֆինանսական ճեղքվածքի մարման համար>>:

Ի լրումն վերոգրյալի՝ ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ռազմավարությունից բխում են նաև հետևյալ միջոցառումները, որոնք ներկայացված են ստորև.

No	Միջոցառման նկարագրություն	Արդյունք	Պատասխանատու	Կատարման ժամկետ
1.	Ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ոլորտի ուսումնասիրություն և դրա արդյունքում իրավական ակտի նախագծի նախապատրաստում	Ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ոլորտի ուսումնասիրության արդյունքներից ելնելով համապատասխան հարցերի կարգավորում	ՀՀ ԲՆ, ԶՏՊԿ (խորհրդատուների աջակցությամբ)	Ուսումնասիրություն իրականացնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում
2.	ՀՀ կառավարության 22.01.2004թ. N 130-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ որոշման նախագծի նախապատրաստում	ՀՀ կառավարության 22.01.2004թ. N 130-Ն որոշումը ՀՀ ջրային օրենսգրքում կատարված փոփոխություններին համապատասխանեցում	ԶՏՊԿ	2015թ.
3.	1) Համայնքների քառամյա զարգացման պլանում՝ որպես պարտադիր տեղեկատվություն, ներառել համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման վերաբերյալ իրենց մոտեցումները (հիմնադրույթները) 2) ՀՀ օրենքի նախագծի նախապատրաստում <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքում կատարել լրացում՝ միջհամայնքային միավորումների գործունեությունը կանոնակարգելու համար (մասնավորապես՝ խնդիրների, իրավասությունների, կառուցվածքի վերաբերյալ):	Միջհամայնքային միավորումների գործունեության կանոնակարգում (կարող է պահանջվել ավելի մանրամասն ուսումնասիրություն՝ ԵԿԱԾ-ի շրջանակում):	ՀՀ ՏԿԱԻՆ ԶՏՊԿ	2015 – 2016թթ.